«Եթե Հայաստանը համարում է, որ ռուսական ռազմաբազան Հայաստանին պետք չէ, մենք կհեռանանք թեկուզ վաղը: Բայց Հայաստանը պատրա՞ստ է դրան: Խնդրեմ: Մենք ոչ ոքի ոչինչ չենք պարտադրի: Իսկ եթե հայ ժողովուրդը ցանկանում է, որ իր կողքին ռուսական ինչ-որ ռազմական թև լինի, ապա մենք կմնանք, կաշխատենք և կհամագործակցենք», - ասել է Պուտինը:

Երեքշաբթի
15 սեպտեմբերի 2026թ.
№ 13 (663)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Թեհրանը TRIPP-ի վերաբերյալ նոր կոշտ պայմաններ է առաջադրում

Թեհրանը Թրամփի ուղու կառուցման վերաբերյալ անսպասելիորեն նոր կոշտ պայմաններ է դրել Փաշինյանի առաջ՝ պահպանելով բարյացկամությունը հրապարակային դաշտում:

Իրանի իշխանությունները պահանջել են, որպեսզի TRIPP-ի պաշտպանության գործն իրականացնեն կամ բացառապես հայկական զինված ուժերը, կամ Հայաստանի տարածքում արդեն գտնվող երրորդ երկրի զինված ուժերը (ակնհայտորեն նկատի ունենալով ռուսական զինված ուժերին):

Ըստ մեր աղբյուրների՝ այդպիսով Թեհրանը փորձում է բացառել ամերիկյան զորքերի հայտնվելն իր սահմաններին, հակառակ դեպքում սրվող հակամարտության պայմաններում իրանցիներն ամերիկյան զինվորներին լեգիտիմ թիրախ են համարելու:

07.09.2026

Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանը գծված է դեռ 1984-88 թթ., ի՞նչն եք սահմանագծում

«Պրեսսինգ» հաղորդաշարում ՀՀ նախկին վարչապետ (1992-1993 թթ.), ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) նախկին նախագահ Խոսրով Հարությունյանը, ի թիվս այլ հարցերի, խոսեց նաև Տիգրանաշենի, «անկլավներ» հասկացության, սահմանագծման և սահմանազատման մասին:

«1991 թ. դեկտեմբերի 21-ի դրությամբ, որպես սահմանազատման արդյունքում ճանաչված սահման՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև պետք է ճանաչված լիներ հենց այդ դրությամբ առկա սահմանը: Արդյո՞ք այդպիսի սահման եղել է: Այո՛, եղել է: 1984-1988 թթ. ընթացքում Ադրբեջանի և Հայաստանի ԽՍՀ-ների միջև ձևավորված է եղել հանձնաժողով պետական սահմանը ճշտելու համար: Այդ 4 տարիների ընթացքում 938 կմ սահման է նշվել, ինչի արդյունքում ձևավորվել է 198 արձանագրություն, որոնք տեքստային նկարագրել են սահմանի տվյալ հատվածը, ամբողջ տեղանքը:

Դրանց հիման վրա 1988 թ. կազմվել է ամփոփիչ արձանագրություն, որը հաստատվել է թե՛ Ադրբեջանի ԽՍՀ-ի, և թե՛ Հայկական ԽՍՀ-ի կառավարությունների կողմից, սահմանի ողջ երկայնքով տեղադրվել են սահմանային այուներ: Եվ եթե դուք հիմք եք ընդունում Ալմա Աթայի (Ալմաթիի) հռչակագիրը, ընդամենը պետք է Ադրբեջանին ասեիք՝ էդ աշխատանքներն արդեն արված են, եկեք այդ սահմանները ճանաչենք որպես պետական սահման: Ավելին, արդեն տեղադրված սահմանային հենասյուները Կիրանցի սահմանազատման ժամանակ հանվել, գցվել են դուրս»,– ասաց Խոսրով Հարությունյանը:

Հիշեցնենք. 1980-ականներին Տավուշում Հայաստանի և Ադրբեջանի միջև վարչական շրջանների ճշգրտման հայկական հանձնաժողովը գլխավորել է նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, երջանկահիշատակ Վլադիմիր Մովսիսյանը: *1988 թվականի հունվարին ստորագրվեց այդ սահմանի մասին վերջին իրավական ակտը՝ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ առանձին հողօգտագործողների միջև սահմանների վերականգնման մասին արձանագրությունը:*

Սահմանների ճշգրտման այս գործընթացում հայկական կողմը վերադարձրեց 14 հազար 450 հեկտար հող, շուրջ 3 հազարը՝ Նոյեմբերյանի հատվածից: Այդ աշխատանքները տեղի էին ունենում ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանի գլխավորությամբ. նրա պաշտոնակիցն Ադրբեջանում Ռասիզադեն էր՝ իր խմբի հետ, և մի քանի ռուս մասնագետներ: Շուրջ չորս տարի է տևել այդ աշխատանքը:

«Դեռ շատ վաղ է խոսել Հայաստանի հետ վիզային ռեժիմի ազատականացման ժամկետների մասին»

Եվրոպական հանձնաժողովը պաշտոնապես վաղաժամ է համարել Հայաստանի հետ վիզային ռեժիմի ազատականացման համար կոնկրետ ժամկետներ սահմանելը: Բրյուսելում կայացած ճեպազրույցի ժամանակ Եվրահանձնաժողովի խոսնակ Պաուլա Պինյոն ընդգծել է, որ «դեռ շատ վաղ է նման ճշգրտության համար»՝ մեկնաբանելով մինչև 2029 թվականը վիզային ռեժիմի չեղարկման հասնելու Երևանի ծրագրերը:

Եվրոպական հանձնաժողովի գլխավոր խոսնակը դեռևս վաղ է համարում նշել կոնկրետ ժամկետ, թե երբ Հայաստանի քաղաքացիները կկարողանան առանց վիզայի ճանապարհորդել Եվրոպական Միության երկրներում: Բրյուսելում Եվրահանձնաժողովի գլխավոր խոսնակ Պաուլա Պինյոն պատասխանել է Factor TV-ի հարցին՝ արդյո՞ք կարող ենք 2029 թվականն իրատեսորեն համարել թիրախային ժամկետ, թե՞ դեռ վաղ է նման կանխատեսում անելը: Ազգային ժողովում Կառավարության 2026-2031 թվականների ծրագիրը ներկայացնելիս վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասել էր, որ. «Մենք մտադիր ենք ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման հասնել 2029 թվականի ընթացքում»: Factor TV-ն միաժամանակ հարց է հնչեցրել՝ արդյո՞ք Եվրոպական Միությունը Հայաստանի հետ քննարկում է ՀՀ-ի կողմից Ռուսաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմ մտցնելու հնարավորությունը՝ վիզաների ազատականացման բանակցությունների շրջանակում: Պաուլա Պինյոի խոսքով՝ Բրյուսելը մեծապես շահագրգռված է Հայաստանի հետ համագործակցության իրական և հետևողական ամրապնդմամբ: Որպես այդ հարաբերությունների խորացման ակնառու ապացույց՝ խոսնակը հիշատակել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի՝ վերջին շրջանում Հայաստան կատարած երկու այցելությունները: **«Ակնհայտ է, որ մենք ներգրավված ենք և Հայաստանի հետ քննարկում ենք մի շարք թեմաներ՝ հասկանալու, թե ինչպես կարող ենք ունենալ ավելի սերտ համագործակցություն: Իսկ արդյո՞ք վաղաժամ է կանխատեսել, թե արդյոք 2029 թվականը կլինի վիզային ազատականացման պահը: Կասեի, որ իսկապես վաղ է այդքան կոնկրետ լինելը: Բայց ինչը կարող ենք հաստատել, այն է, որ քննարկումներ են ընթանում մի շարք ոլորտներում, և երբ այս թեմաները հասունանան, մենք կանցնենք հաջորդ փուլին՝ Հայաստանի հետ ավելի ու ավելի սերտ գործընկերության ուղղությամբ»,–** պատասխանել է նա: Հիշեցնենք, որ ուղիղ երկու տարի առաջ՝ 2024 թվականի սեպտեմբերին, մեկնարկել է ԵՄ-ի և Հայաստանի միջև վիզաների ազատականացման շուրջ երկխոսությունը, որի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի քաղաքացիների համար ԵՄ առանց վիզայի ճանապարհորդության համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Հայաստանի կողմից Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ առաջընթացի առաջին զեկույցը հրապարակվել է այս տարվա ապրիլի վերջին, որում նշվել է՝ **«Հայաստանի իշխանություններն ամուր քաղաքական հանձնառություն են դրսևորել ՎԱԳԾ-ով ակնկալվող բարեփոխումների իրականացման հարցում»**:





Ադրբեջանն ընդլայնել և ամրապնդել է ռազմական դիրքը Սյունիքի տարածքում

Ադրբեջանն ընդլայնել և ամրապնդել է Հայաստանի տարածքի խորքում իր հենակետը: Այդ մասին վկայում են Sputnik Արմենիան հետազոտած արբանյակային լուսանկարները:

Խոսքը 2021 թ. ներխուժումից հետո Սյունիքում տեղակայված ադրբեջանական ռազմական հենակետի մասին է:

Sputnik Արմենիան ուսումնասիրել է, մասնավորապես, 2025 թվականի մայիս և հուլիս ամիսների արբանյակային լուսանկարները, որոնք համեմատելով՝ ակնհայտ են էական փոփոխություններ. երկու ամսում այստեղ ընդարձակվել են ճանապարհները, փորվել է խրամատների ցանց, կառուցվել են նոր ամրաշինություններ: Հուլիսյան լուսանկարում երևում է, որ աշխատանքները շարունակվում են:

Նշենք, որ սահմանազատման շրջանակներում Հայաստանն ու Ադրբեջանը պայմանավորվել են հիմք ընդունել ԽՍՀՄ փլուզման պահին միութենական հանրապետությունների սահմանները: Խորհրդային քարտեզների հիման վրա 2024 թվականին արդեն համաձայնեցվել է մոտ 12 կմ Տավուշում:

Սակայն Google-ի և ԽՍՀՄ ՀՈՒ գլխավոր շտաբի 1974 թվականի քարտեզների համադրմամբ պարզվում է, որ Ադրբեջանի ՀՈՒ տվյալ հենակետը գտնվում է Հայաստանի տարածքում՝ սահմանից մոտ 3 կմ հեռավորության վրա:

Ըստ այդմ, խորհրդային քարտեզներով հետագա սահմանազատման պարագայում այդ հատվածի նկատմամբ Երևանի ինքնիշխանությունը որևէ հարց չի առաջացնի:

Հատկանշական է, որ սահմանազատման հիմնարար սկզբունքները կողմերը համաձայնեցրել էին դեռևս 2024 թվականի մայիսին, սակայն դա չի խանգարել Ադրբեջանին 2025 թվականին էապես ուժեղացնել այդ հենակետը:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ սա Հայաստանի տարածքի «նեղ» հատվածներից մեկն է. Հայաստանի սահմանների միջև հեռավորությունը կազմում է ընդամենը 26-27 կմ:

Սա Հայաստանի տարածքում ադրբեջանական դիրքի ամրապնդման միակ դեպքը չէ: Հայաստանի տարածքում նմանատիպ գործողություններ Ադրբեջանը ձեռնարկել է, օրինակ, 5-6 կմ դեպի հարավ-արևելք գտնվող տարածքում:

//

Ի՞նչ է տեղի ունեցել Հակարիի կամրջի մոտ. իրարամերժ տեղեկություններ Կոռնիձորով ադրբեջանցիների առաջխաղացման մասին

Կոռնիձորով ադրբեջանական զորքի առաջխաղացման մասին տեղեկությունը պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հերքել է...

Ավելի վաղ Տեղի համայնքապետարանից էին հերքել, թե Հակարիի կամրջի մոտ ադրբեջանցիները փորձում են առաջխաղացում ունենալ, բայց հայ սահմանապահները թույլ չեն տալիս:

Դրան ի պատասխան՝ «Առավոտ»-ը հրապարակել է Սյունիքի մարզ այցելած լրագրողների և Տեղ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, Կոռնիձորի վարչական ղեկավար Սուրեն Ամարյանի ձայնագրությունը, որտեղ վարչական ղեկավարն ասում է. **«Հակարիի կամրջի մոտ ադրբեջանցիներն ուզում են առաջանալ, բայց մենք չենք թողնում»:**

* * *

Արցախին սահմանակից Սյունիքի մարզի Կոռնիձոր համայնքում՝ Հակարիի կամրջի մոտ ադրբեջանցիները փորձում են առաջխաղացում ունենալ, բայց հայ սահմանապահները թույլ չեն տալիս: Այդ մասին, պատասխանելով «Առավոտ»-ի հարցին, Կոռնիձոր այցելած լրագրողներին ասել է Տեղ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, Կոռնիձորի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Ամարյանը:

«Հակարիի կամրջի մոտ կա սահմանազատման խնդիր: Ադրբեջանցիներն ուզում են առաջանալ, բայց մենք չենք թողնում: Սահմանապահ զորքն է զբաղվում այդ հարցով, մենք չենք խառնվում: Ադրբեջանցիներն ասում են՝ մեր հողն է, մենք ասում ենք՝ մերն է»,– ասել է Սուրեն Ամարյանը: Նրա տեղեկացմամբ՝ Հայաստան-Ադրբեջան ամենաերկար սահմանը Կոռնիձոր համայնքում է՝ 18 կմ: **«Այլ բնակավայրերում այդքան երկար սահման չկա: Չորս տարուց ավելի է՝ մեզ մոտ սահմանապահ զորքերն են կանգնած, մեզ համար խաղաղություն է, կրակոցներ չկան՝ ոչ Ադրբեջանի, ոչ մեր կողմից: Մարդիկ աշխատում, իրենց համար ապրում են»,–** հավելեց նա:

«Առավոտ»-ի հարցին, թե արդյոք դա խաղաղությո՞ւն է, եթե թշնամին փորձում է առաջխաղացում ունենալ, Սուրեն Ամարյանը պատասխանել է՝ **«Դե հիմա իրենք ձգտում են առաջանալ, մենք էլ ենք ձգտում: Բայց փաստորեն առանց կրակոցների է դա տեղի ունենում, միայն լեզվակռիվ է,**– հավելել է Սուրեն Ամարյանը:

//

Իրանն առաջարկում է ՀՀ-ին՝ սահմանի մոտ տնտեսական գոտի ստեղծել

Իրանի «Արաս» ազատ տնտեսական գոտին հետաքրքրված է Հայաստանից ներդրումներ ներգրավելու, սակայն նաև երկու երկրներում համատեղ արտադրություններ ստեղծելու հարցում: Այս նպատակով իրանական կողմը պատրաստ է օգտագործել Հայաստանի չգործող «Մեղրի» ազատ տնտեսական գոտին:

Իրանական «Արաս» ազատ տնտեսական գոտու ղեկավարությունն առաջարկում է Հայաստանին համատեղ ազատ տնտեսական գոտի ստեղծել երկու երկրների սահմանի մոտ: Այդ մասին Երևանում կայացած «Armenia Expo 2026» ցուցահանդեսի շրջանակներում Sputnik Արմենիային հայտնել է «Արաս» ազատ տնտեսական գոտու գործադիր տնօրեն Հադի Մողադամզադեն:

Նրա խոսքով՝ իր առաջարկը նա հնչեցրել է Հայաստանի էկոնոմիկայի փոխնախարարներից մեկի հետ զրույցի ժամանակ :

«Այդ ազատ գոտին կարող է տեղակայվել Մեղրիում, կամ մեզ մոտ՝ «Արաս»–ում, կամ Նորդուզում (գյուղ Իրանում, Հայաստանի հետ նույնանուն սահմանային անցակետի մոտ - խմբ.): Կարևոր է՝ կոնկրետ որտեղ, կարևորն արդյունքն է», – հայտարարել է Մողադամզադեն:

Նա հավելեց, որ «Արաս» ազատ տնտեսական գոտին լայն հնարավորություններ է առաջարկում, սակայն դա չի բացառում իրանական կողմի հետաքրքրվածությունը համագործակցել Հայաստանի «Մեղրի» ազատ տնտեսական գոտում: Երկու ազատ գոտիները միմյանց մոտ են գտնվում. «Արաս»–ը՝ Նորդուզ-Մեղրի սահմանային անցակետից մոտ երկու ժամվա հեռավորության վրա է, իսկ «Մեղրի» ազատ գոտին՝ Իրանի հետ սահմանի մոտ: Ճիշտ է, իրանական ազատ տնտեսական գոտին դինամիկ զարգանում է արդեն մի քանի տարի, մինչդեռ հայկականը, չնայած բացվել է գրեթե 10 տարի առաջ, գործնականում չի աշխատում: Այս հարցը ևս Մողադամզադեն քննարկել է էկոնոմիկայի փոխնախարարի հետ հանդիպման ժամանակ:

«Մենք տեղյակ ենք, որ ազատ տնտեսական գոտու համար նախատեսված տարածքը մասնավոր սեփականություն է, և դրա սեփականատերերի հետ իրավական գործընթացներ են դեռ գնում: Մենք առաջարկել ենք հետևյալը. եթե իրանցի ներդրողները հետաքրքրվեն «Մեղրի» ազատ տնտեսական գոտու զարգացմամբ, մենք պատրաստ ենք աջակցել նրանց նախագծերին տարածքի սեփականատերերի հետ՝ իհարկե, Հայաստանի կառավարության համաձայնությամբ», – հայտարարեց Իրանի ներկայացուցիչը:

Ցավոք, նման նախագծեր ձեռնարկելու ունակ հայ և իրանցի ներդրողները դեռևս չեն փնտրել և չեն գտել միմյանց: Գուցե գործն արագանա, եթե հայկական կողմը բավականաչափ գիտակ և պատասխանատու մեկին նշանակի, նշեց իրանցի մենեջերը:

«Ցավով պետք է նշեմ, որ Հայաստանի և Իրանի միջև առևտրատնտեսական համագործակցությունը ևս դեռ այն մակարդակի վրա չէ, ինչ քաղաքական հարաբերությունները: Մենք պետք է մեր տնտեսական համագործակցությունը հասցնենք կայուն գործընկերության մակարդակի: Այցը բարեկամական Հայաստան լավ հնարավորություն է նման նախաձեռնությունների համար», – հավելեց նա:

Խոսելով «Արաս» գոտու ներուժի մասին՝ Մողադամզադեն ընդգծեց, որ դրա ռեզիդենտ ընկերությունները ստանում են մատչելի տարածքներ ու էլեկտրաէներգիա՝ արտադրությունը կազմակերպելու համար, մաքսային արտոնություններ, ինչպես նաև 20 տարով ազատվում են հարկերից: Դռները բաց են հայ ներդրողների համար, և մնում է միայն կրկին անգամ ափսոսանք հայտնել, որ այնտեղ դեռ հայ ներդրողներ չկան, նշեց մեր զրուցակիցը:

Նրա խոսքով՝ «Արաս» ազատ տնտեսական գոտում արտադրված ապրանքները կարող են վաճառվել ոչ միայն երրորդ երկրներում, այլև Իրանում: Հնարավորություններ կան նաև ապրանքների ամենալայն տեսականու արտահանման համար: Մասնավորապես, ազատ գոտու տարածքում մեծ ջերմոցային համալիր կա, որն իր արտադրանքն արտահանում է տարածաշրջանի, ինչպես նաև ԱՊՀ երկրներ: Նման արտադրությունը կարող է օգտակար լինել Հայաստանի համար՝ հաշվի առնելով, որ այստեղ այս պահին գյուղմթերքի արտահանման հետ կապված խնդիրներ կան, հավելեց Մողադամզադեն:

«Իր հերթին Իրանի համար Հայաստանը նաև դարպաս է դեպի Եվրասիական տնտեսական միություն: Հետևաբար, մեր երկու երկրները պետք է պայմաններ և ենթակառուցվածքներ ստեղծեն մեր գործարար շրջանակների միջև», – ընդգծեց «Արաս» ազատ տնտեսական գոտու ներկայացուցիչը:

Եզրափակելով՝ Մողադամզադեն նշեց, որ ազատ գոտում կարող են տեղակայվել նաև տուրոպերատորներ: Ոչ հեռու (մոտավորապես երկու ժամ հեռավորության վրա) երկու հայկական վանական համալիրներ կան՝ Սուրբ Ստեփանոսը և Սուրբ Թադեն: Երկուսն էլ ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

«Այս վանքերը հայտնի են ամբողջ աշխարհում և բազմաթիվ զբոսաշրջիկների և ուխտավորների են գրավում, մեծամասամբ, իհարկե, հայերի: Մեր տարածաշրջանում նաև այլ տեսարժան վայրեր կան, օրինակ՝ «Արաս» երկրաբանական այգին, որը մեծությամբ երկրորդն է Մերձավոր Արևելքում», – ասաց Իրանի ներկայացուցիչը:

Նշենք, որ Իրանում ազատ տնտեսական գոտիները կառավարվում են Իսլամական Հանրապետության կառավարությանը կից գործող խորհրդի կողմից, որը համակարգում է էկոնոմիկայի և ֆինանսների նախարարը:

//

Անհասկանալի դադար Սյունիքի դպրոցների օպտիմալացման հարցում. խա՞ղ, թե՞ բնակչության օրինաչափ զայրույթի զսպում

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Համայնքների խոշորացումից հետո, ինչպես քանիցս նշել ենք, օպտիմալացման ալիքը նաև դպրոցներին է հասել: Դեռևս 2023 թ. սեպտեմբերի 11-ից հրապարակի վրա է «ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում ներառված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը հաստատելու մասին» N 1790 Ա 2 որոշումը: Մեր թերթը երկու անգամ անդրադարձել է այս խնդրին՝ 2025 թվականի նոյեմբերի 25-ի և 2025 թվականի մարտի 6-ի համարներում: Բայց նոր ուստարվան ընդառաջ որոշեցինք կրկին անդրադառնալ թեմային՝ մանավանդ այն խնդրահարույց որոշ հարցեր է պարունակում:

Ավելորդ չենք համարում ընթերցողին հիշեցնել օպտիմալացվող դպրոցների ցանկն ըստ Սյունիքի խոշորացված համայնքների՝ Կապանում՝ 12, Սիսիանում՝ 19, Տաթևում՝ 2, Գորիսում՝ 3, Տեղում՝ 3, Քաջարանում՝ 4, Մեղրիում՝ 5, ընդհանուր առմամբ 48 դպրոց, գյուղապահպանության 48 սյուն: Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աղբյուրների՝ ծրագրի առաջին փուլը նախատեսվում է սկսել 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

Այսպես կոչված օպտիմալացման ցուցակում է նաև Կարճևանի միջնակարգ դպրոցը, որն ունի 25 աշակերտ: Պարապմունքները հինգ տարի է անցկացվում են գյուղի բուժկետում, և ինչպես նշեց դպրոցի տնօրենը, հարմարվել են բուժկետի պայմաններին: Կրթօջախը պիտի միավորվի Ագարակի միջնակարգ դպրոցին: Ագարակում կառուցվում է 864 տեղանոց դպրոցական նոր մասնաշենք: Շինարարությունն իրականացնում է «Մեղրիի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊ ընկերությունը: Տնօրեն Ազատ Գասպարյանի տեղեկացմամբ՝ դպրոցի շինարարության ավարտ է սահմանված 2027 թվականի նոյեմբերի 30-ը: Նրա իսկ փոխանցմամբ՝ մնում է իրականացնել շինարարության 30 տոկոսը:

Նաև հավելենք, որ Կարճևանն Ագարակից չորս կմ հեռավորության ճանապարհ է բաժանում, ասել է թե՝ պիտի լուծվի նաև դպրոցականների և ուսուցիչների փոխադրամիջոցի խնդիրը:

Ցավալի է, որ կառավարության վերոհիշյալ ցանկի մեջ ներառված են նաև սահմանամերձ ու բարձր լեռնային գյուղերի դպրոցներ՝ զորօրինակ Նռնաձորը: Այս և Ալվանք գյուղերի դպրոցները պիտի միավորվեն Շվանիձոր գյուղի դպրոցին: Վերջինում հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են, բայց օպտիմալացման մասին առայժմ խոսք չկա. Ալվանքում և Նռնաձորում դպրոցական պարապմունքները դեռևս անցկացվում են տեղի դպրոցներում:

Մեծ աղմուկ բարձրացավ այն փաստի առիթով, որ Լեռնաձոր գյուղի նշանավոր դպրոցը պիտի միանա Ձագեձորի միջնակարգ դպրոցին, որն ավելի քիչ աշակերտ ունի՝ Լեռնաձորի դպրոցի համեմատ:

Լեռնաձորում աշխատանքային այցով գտնվող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին ներկայացրին խնդրո առարկան, որ անթույլատրելի է նման միավորումը: Դպրոցի տնօրեն Ծովինար Գրիգորյանը խմբագրությանը հայտնեց, որ բարձրացված աղմուկից հետո հարաբերական լռություն է: Նաև ասաց, որ երկու դպրոցի միավորման վերաբերյալ իրենք որևէ պաշտոնական գրություն չեն ստացել: Ինչևէ, այս ուսումնական տարում Լեռնաձորի դպրոց կհաճախի 7 առաջին դասարանցի: Իսկ ընդհանրապես կրթօջախում 90 աշակերտ է սովորում:

Այդ տխրահռչակ որոշման մեջ ընդգրկվել է սահմանամերձ ևս մի գյուղ՝ Դավիթբեկը: Սա արդեն դաշույնի հարված է երկրի անվտանգությանը: Քանզի սահմանամերձում փակել դպրոցի դռները՝ կնշանակի աշխատատեղերի կրճատում և արտագաղթ: Դժվար է ասել, թե ում խելքին է փչել Կապանի ամենամեծ գյուղի՝ Դավիթբեկի Արամ Մանուկյանի անվան դպրոցը միավորել Արծվանիկի միջնակարգ դպրոցի հետ:

Իրողությունն այն է, որ Արծվանիկում դպրոցական նոր շենք է կառուցվում հնի կողքին, որը պատրաստ լինելուց հետո միայն կարող է խոսք լինել երկու դպրոցի միավորման մասին: Դավիթբեկ գյուղի դպրոցը միացնելն Արծվանիկի դպրոցի հետ, ոչ մի տրամաբանության մեջ չի տեղավորվում, քանզի այս պարագայում ևս գործ ունենք սահմանը թուլացնելու տխուր իրողության հետ:

Խնդիրն ունի նաև բարոյական ու ազգապահպանության բաղադրիչներ: Փակելով գյուղի դպրոցը՝ նաև սուրբ հիշատակներ են զրոյացվում: Դավիթբեկի դպրոցը մեկ դարից ավելի պատմություն ունի: Նրա քուրայով են անցել բազում հայտնի մարդիկ: 1990 թվականից դպրոցը կոչվում է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր ու ականավոր պետական ու ազգային գործիչ Արամ Մանուկյանի անունով, ով այդ գյուղի զավակ է: Դպրոցի մուտքին փակցված է մեծն հայի հարթաքանդակը...

Սիսիանի տարածաշրջանի Դարբասի միջնակարգ դպրոցին պիտի միանա, մասնավորապես, Լոր գյուղի դպրոցը: Վերջինիս տնօրեն Լիաննա Գրիգորյանը խմբագրությանը հայտնեց, որ կրթօջախում 25 աշակերտ է սովորում (երկու առաջին դասարանցի): Սա ասում եմ այն համատեքստում, որ տարիներ առաջ այդ դպրոցում ներկա էինք Համո Սահյանի տարեդարձին նվիրված մի տպավորիչ միջոցառման՝ բազմաթիվ աշակերտների մասնակցությամբ:

Շենաթաղի հիմնական դպրոցում, որը նույնպես պիտի միանար Դարբասի դպրոցին, այս ուստարում նույնպես պարապմունքներն անցկացվում են սեփական հարկի տակ: Այստեղ ևս միավորվելու մասին պաշտոնական գրություն դեռևս չեն ստացել:

Հենակետային է դառնում նաև Վաղատինի միջնակարգ դպրոցը, որին պիտի միանան Շամբի, Որոտանի, Լծենի դպրոցները: Շամբի միջնակարգ դպրոցի տնօրեն Հերմինե Ստեփանյանի փոխանցմամբ՝ պաշտոնապես չեն տեղեկացվել Վաղատինի դպրոցին միանալու մասին: Նոր ուսումնական տարին սկսել են 31 աշակերտով, որից երկուսը՝ 2026-27 ուստարին ավարտելուն պես հրաժեշտ կտան դպրոցին:

Շամբը Վաղատինից բավականին հեռու է՝ մոտ 10 կմ:

Որոտանի հիմնական դպրոցի տնօրեն Շուշան Ստեփանյանը ևս տեղյակ էր վերամիավորման մասին: Այդքանը՝ պաշտոնական ոչ մի գրություն: Կրթօջախն ունի 18 աշակերտ, որից միայն մեկը՝ առաջին դասարանցի: Չորսը՝ ուստարին ավարտելուց հետո հրաժեշտ կտան դպրոցին:

Որոտանը Վաղատինից հեռու է մոտ 6 կմ:

Հեռախոսազրույց ունեցանք նաև հենակետային՝ Վաղատինի միջնակարգ դպրոցի տնօրեն Վազգեն Բաբայանի հետ: Նա խմբագրությանը փոխանցեց, որ երկու տարի է՝ պարապմունքներն անցկացվում են նոր դպրոցում: Ուսումնական տարին սկսել են 48 աշակերտով, որից 7-ը՝ առաջին դասարանցի: Նաև հայտնեց, որ վերամիավորման մասին պաշտոնապես տեղեկացված չէ:

Ինչպես երևում է, առայժմ դպրոցի օպտիմալացման մասին որոշման իրագործումն անորոշության հուն է մտել: Կարելի է ենթադրել, որ ժամանակավոր դադար են վերցրել՝ Սյունիքի բնակչության զայրույթը զսպելու համար:

Կամ գուցե բարձր դռանը պատահականորեն գտնվել են գործիչներ, ովքեր ի վերջո գիտակցել են՝ Սյունիքում 48 դպրոց փակելով՝ երկրամասը մեծ հարված կստանա: Թեև դժվար է հավատալ, որ այնտեղ Սյունիքի մասին լրջորեն մտածող պետական այրեր կգտնվեն:

Դպրոցականների շախմատի օլիմպիադայի եզրափակիչ փուլը՝ Կապանում

Կապանը երկու օր ապրեց շախմատային կյանքով: Այս անգամ խաղատախտակների շուրջ նստեցին դպրոցականները:

Սեպտեմբերի 10-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի դպրոցականների շախմատի 20-րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլը, որին մասնակցում էր 14 թիմ: Նրանցից երկուսը ներկայացնում են Սյունիքը՝ Սիսիանի թիվ 4 և Կապանի թիվ 7 հիմնական դպրոցները: Մրցաշարի բացման արարողությանը ներկա էր Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ, Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր տնօրեն, միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը, ով դպրոցական շախմատիստներին հաջողություններ մաղթեց շախմատի տախտակի շուրջ: Ցուցադրվեց կարճ տեսանյութ՝ նվիրված օլիմպիադայի պատմությանը:

Մրցաշարի կանոնակարգը ներկայացրեց և վիճակահանությունն իրականացրեց օլիմպիադայի գլխավոր մրցավար, միջազգային կարգի մրցավար Վահագն Խաչատրյանը:

Երաժշտական կատարումներով հանդես եկան մշակույթի կենտրոնի մենակատարներ Էլեն Գրիգորյանը, Էմիլ Հարությունյանը, Ռազմիկ Հարությունյանը:

Առաջին երեք տեղեր գրաված թիմերն իրավունք կստանան մասնակցելու այս տարվա աշխարհի առաջնության եվրոպական փուլին, որ տեղի կունենա Ծաղկաձորում սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 3-ը:

Արդեն 20 տարի է՝ օլիմպիադան իրականացվում է Հայաստանի շախմատի ակադեմիայի կողմից՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության գլխավոր հովանավորությամբ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

* * *

Երկօրյա պայքարից հետո Կապանի մշակույթի կենտրոնում ավարտվեց ՀՀ դպրոցականների շախմատի 20-րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլը:

Սեպտեմբերի 12-ին տեղի ունեցան մրցաշարի փակման արարողությունը և մրցանակների հանձնումը: Մրցաշարի արդյունքներն ամփոփեց օլիմպիադայի գլխավոր մրցավար, միջազգային կարգի մրցավար Վահագն Խաչատրյանը: Հաղթող դարձավ Երևանի թիվ 77 դպրոցի թիմը, երկրորդ հորիզոնականում Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրն էր, երրորդը Այնթապի միջնակարգ դպրոցի հավաքականն էր: Բարեմաղթանքի խոսքերով հանդես եկան Հայկական բարեգործական ընդհանուր միության ծրագրերի տնօրեն Ինեսա Մարգարյանը, Սյունիքի շախմատի ֆեդերացիայի նախագահ Արտուր Խոջաբաղյանը: Միջազգային գրոսմայստեր, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ, Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր տնօրեն

Սմբատ Լպուտյանը սպորտային բաղադրիչից զատ՝ կարևորեց նաև այն, որ պատանի շախմատիստները հաղորդակցվում են միմյանց հետ, ձեռք բերում նոր ընկերներ, այցելում Կապանի տեսարժան վայրեր:

Սմբատ Լպուտյանը և Ինեսա Մարգարյանը հատուկ մրցանակներ հանձնեցին առանձին խաղատախտակների վրա լավագույն արդյունքներ ցույց տված շախմատիստներին: Մեդալներ, հուշանվերներ և հավաստագրեր հանձնեցին մրցանակակիր թիմերին և նրանց մարզիչներին: Իսկ ընդհանուր առմամբ՝ հավաստագրեր և Հայ բարեգործական ընդհանուր միության կողմից հուշանվերներ ստացան մրցաշարի մասնակից 14 թիմերի շախմատիստները:

Այնուհետև առաջիկա կարևոր մրցաշարին՝ սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 3-ը, Ծաղկաձորում կայանալիք ՖԻԴԵ-ի դպրոցականների աշխարհի թիմային առաջնության եվրոպական մրցումային փուլին հաջող մասնակցելու մաղթանքներ եղան: Ամենավերջում շնորհակալություն հայտնվեց հայ բարեգործական ընդհանուր միությանը, Կապանի համայնքապետարանին և այն մարդկանց, ովքեր նպաստեցին օլիմպիադայի եզրափակիչ փուլի կայացմանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Իրանը Կապանում նոր գլխավոր հյուպատոս ունի

Իրանը Կապանում նոր գլխավոր հյուպատոս ունի. այդ պաշտոնում նշանակվել է Դավուդ Յայջին: Այդ մասին նշվում է Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչիի թելեգրամյան ալիքում:

Հայաստանի Կապան քաղաքում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ գլխավոր հյուպատոս Դավուդ Յայջին պաշտոնի ստանձնման մեկնելուց առաջ հանդիպել է արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիի հետ և ներկայացրել իր ծրագիրը:

Մաղթելով հաջողություն նորանշանակ գլխավոր հյուպատոսին՝ արտաքին գործերի նախարարը կարևորել է Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի միջև հարաբերությունները՝ բարիդրացիության քաղաքականության համատեքստում, ինչպես նաև ընդգծել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում, հատկապես՝ տնտեսական և հյուպատոսական բնագավառներում կապերի խորացման անհրաժեշտությունը:

Հրաժեշտի հանդիպում «Սյունյաց երկրի» խմբագրատանը. Մորթեզա Աբեդին Վարամին թողնում է գլխավոր հյուպատոսի պաշտոնը և աշխատանքի անցնում Իրանի ԱԳՆ–ում

Այսօր՝ սեպտեմբերի 15-ին, «Սյունյաց երկրի» խմբագրատանը հյուրընկալվեց Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին, ով թողնում է գլխավոր հյուպատոսի պաշտոնը և աշխատանքի անցնում Իրանի արտաքին գործերի նախարարությունում:

Այցելության նպատակն էր՝ հրաժեշտ տալ «Սյունյաց երկրի» խմբագրակազմին, որի հետ սերտ համագործակցություն է ունեցել հյուպատոսարանի հիմնադրման ժամանակվանից՝ 2022 թ. հոկտեմբերի 21-ից ի վեր:

Ջերմ և բարեկամական հանդիպման ընթացքում Սամվել Ալեքսանյանը բարձր գնահատեց հյուպատոսարանի և անձամբ Մորթեզա Աբեդին Վարամիի գործունեությունը հայ–իրանական հարաբերությունների զարգացման գործում:

– Սյունիքում երբեք չեն մոռանա, որ մեր երկրամասի համար դժվարին օրերին՝ 2020-22 թթ. ողբերգական իրադարձություններից հետո, Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ ի դեմս Կապանի հյուպատոսարանի և անձամբ Մորթեզա Աբեդին Վարամիի, մեր կողքին էր, – ասաց **Սամվել Ալեքսանյանը:**

Մորթեզա Աբեդին Վարամին շնորհակալություն հայտնեց մարզային պարբերականի խմբագրակազմին՝ համագործակցության և հայ–իրանական բարեկամական կապերի ամրապնդմանն աջակցելու համար:

Պարոն Վարամին խնդրեց իր երախտագիտությունը փոխանցել Սյունիքի մարզի բնակչությանը՝ հատկապես Իրանի համար դժվարին ժամանակներում մշտապես բարոյական աջակցություն ցույց տալու համար:

– Սյունիքից հեռանում եմ՝ ինձ հետ տանելով անմոռանալի տպավորություններ և լավագույն հուշեր, որոնք վկայում են մեր երկու ժողովրդի բարեկամության ու եղբայրության մասին, – ասաց գլխավոր հյուպատոսը:

Երկուստեք՝ Սամվել Ալեքսանյանն ու Մորթեզա Աբեդին Վարամին, արձանագրեցին իրողությունը, որ վերջին չորս տարում, շնորհիվ հյուպատոսարանի, բավականին ամուր հիմքեր են ստեղծվել Սյունիքի և Իրանի համագործակցության համար, ինչը (անշուշտ) շարունակություն կունենա հետայսու ևս:

Մորթեզա Աբեդին Վարամին վերջում պատասխանեց «Սյունյաց երկրի» հարցերին, որը կհրապարակվի հաջորդիվ:

ՀՀ ԿԳՄՍՆ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժի թափուր աշխատատեղերի համար՝ հետևյալ ծանրաբեռնվածությամբ.

1. «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտության դասախոս -1 դրույք
2. «Ֆիզիկա» առարկայի դասախոս - 1 դրույք
3. «Ռուսաց լեզու» առարկայի դասախոս - 0.5 դրույք
4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասախոս -1 դրույք

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1)
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը)
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը)
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4)
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապտության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը)
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Վերոնշյալ թափուր տեղերի համար կարող են դիմել այն անձինք, ովքեր ունեն դասընթացի բնույթին համապատասխան բարձրագույն կրթության որակավորում: Նախապատվությունը կտրվի այն անձանց, ովքեր ունեն տվյալ մասնագիտական բնագավառի մանկավարժական փորձ: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 15-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-17:30՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թ. հոկտեմբերի 5-ին «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում հասցեն՝ ք. Կապան Գ. Արզումանյան 11ա:

1. «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտության դասախոս -1 դրույք, ժամը -13:30
2. «Ֆիզիկա» առարկայի դասախոս-1 դրույք, ժամը -14:00
3. «Ռուսաց լեզու» - 0.5 դրույք, ժամը –14:30
4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասախոս-1 դրույք, ժամը-15:00

Կոնտակտային տվյալներ՝ էլ. հասցե syunik-college@rambler.ru, հեռախոս՝ 028553061, 077384872:

Ստորագրվեց «Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի» շրջանակում համայնքային զարգացման համաձայնագիրը

Ստորագրվել է «Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի» շրջանակում Համայնքային զարգացման համաձայնագիրը, որով նախատեսվում են տարեկան 7-9 մլն ԱՄՆ դոլարի, իսկ առաջին 18-ամսյա ժամանակահատվածի համար՝ 10.5 մլն ԱՄՆ դոլարի համայնքային զարգացման ներդրումներ:

Համաձայնագիրը ստորագրվել է «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի, ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության, և Ջերմուկ, Վայք ու Սիսիան համայնքների միջև:

Համաձայնագրով «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն ստանձնում է համայնքային զարգացման տարեկան ֆինանսական ներդրումներ կատարելու պարտավորություն՝

- շինարարության փուլում՝ տարեկան 7 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ,
- արտադրության փուլում՝ տարեկան 7 մլն կամ 9 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ կախված համապատասխան ժամանակահատվածում ոսկու միջին գնից,
- 2025 թ. հուլիսի 1-ից մինչև 2026 թ. դեկտեմբերի 31-ն ընկած առաջին 18-ամսյա ժամանակահատվածի համար՝ 10.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Համաձայնագրով նախատեսվում է նաև ստեղծել «Ամուլսարի համայնքային զարգացման հիմնադրամ», որի միջոցով կիրականացվի համայնքային զարգացման ծրագրերի ֆինանսավորման և կառավարման հիմնական մասը:

Փաստաթուղթը ստորագրել են նաև «Լիդիան Արմենիա» ՓԲԸ գործադիր տնօրեն Հայկ Ալոյանը, Վայքի համայնքապետ Մխիթար Մաթևոսյանը, Սիսիանի համայնքապետ Հովսեփ Առաքելյանը և Ջերմուկի համայնքապետ Մանան Գևորգյանը:

Ստորագրման արարողությանը ներկա են եղել նաև «Լիդիան Արմենիայում» Կառավարության ներկայացուցիչ Գնել Սանոսյանը, Վայոց Ձորի մարզպետ Վահագն Արսենյանը և Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

Համաձայնագրի նպատակն է ծրագրի ազդեցության ենթակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված

ֆինանսական աջակցության տրամադրման, կառավարման, բաշխման և վերահսկողության միասնական իրավական ու ինստիտուցիոնալ շրջանակի սահմանումը:

Համաձայնագրով սահմանված ազդակիր բնակավայրերն են Ջերմուկը, Կեչուտը, Գնդեվազը, Սարավանը՝ ներառյալ Սարալանջը և Ուղեձորը, Գորայքը:

01.09.2026

ՄԵՂՐԻՆ՝ ԱՊՀ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Մեղրիում կանցկացվի «Համագործակցության երկրների կինոփառատոնը»

«Մեղրին՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք 2026» միջոցառումների շրջանակում սեպտեմբերի 18–20-ը Մեղրիում կանցկացվի «Համագործակցության երկրների կինոփառատոնը»:

Կինոփառատոնը կազմակերպում է «Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի աջակցությամբ:

Կինոփառատոնի մրցույթային ծրագրում ընդգրկված է 30 կարճամետրաժ խաղարկային ֆիլմ, որոնցից 14-ը ներկայացնում են ԱՊՀ անդամ երկրները, իսկ 16-ը՝ Հայաստանը:

Միջազգային ծրագրում ներկայացված են Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության երիտասարդ կինոգործիչների աշխատանքները:

Մրցանակներ և մասնագիտական ծրագիր

Փառատոնի մրցութային ծրագրի լավագույն աշխատանքները կգնահատի մասնագիտական ժյուրին:

Մրցանակներ կշնորհվեն հետևյալ անվանակարգերում՝

- Լավագույն ֆիլմ
- Լավագույն ռեժիսոր
- Ժյուրիի հատուկ մրցանակ
- Ժյուրիի հատուկ հիշատակում

Կինոփառատոնի մասնագիտական ծրագրում նախատեսված են նաև պանելային քննարկումներ՝ նվիրված համատեղ ֆիլմարտադրության զարգացման հնարավորություններին և ժամանակակից կինեմատոգրաֆիայում արհեստական բանականության ազդեցությանը:

Փառատոնը՝ Մեղրիում

«Համագործակցության երկրների կինոփառատոնի» բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա սեպտեմբերի 18-ին, ժամը 18:00-ին՝ Մեղրիի մարզամշակութային կենտրոնում:

Սեպտեմբերի 19–20-ին կինոցուցադրությունները, մասնագիտական և մշակութային միջոցառումները, ինչպես նաև փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը

կանցկացվեն «Լոֆթ Մեղրի»-ում:

Փառատոնի բոլոր միջոցառումների մուտքն ազատ է:

Փառատոնի աջակիցներն են՝ Մեղրիի համայնքապետարանը, Մեղրիի մարզամշակութային կենտրոնը, «Լոֆթ Մեղրի»-ին և«Դարկ» ընկերությունը:

ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Մեղրիում կայացավ «Պար առանց սահմանների» միջազգային փառատոնի բացման արարողությունն ու գալա համերգը

Օգոստոսի 28-ին 2026 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք Մեղրիում հանդիսավորությամբ կայացավ «Պար առանց սահմանների» միջազգային փառատոնի բացման արարողությունն ու գալա համերգը:

Աշակութային բացառիկ միջոցառումը համախմբել էր ազգային պարն ու երաժշտությունը ներկայացնող ստեղծագործական համույթների՝ Հայաստանից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից և Բելառուսից՝ բեմում մեկտեղելով տարբեր ժողովուրդների մշակութային ինքնատիպությունն ու ազգային գունագեղությունը:

Միջոցառման մեկնարկին ողջույնի և շնորհակալական խոսքով հանդես եկավ Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը: Ներկաներին ողջունեցին նաև ԱՊՀ մասնակից պետությունների Միջպետական հումանիտար համագործակցության հիմնադրամի ներկայացուցիչ Կամոլ Ռախանովը, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանի տնօրեն Լուսինե Թորոյանը և Մեղրիի մարզամշակութային կենտրոնի տնօրեն Անի Ղազարյանը:

«Պար առանց սահմանների» միջազգային փառատոնն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ՝ Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանի հետ համագործակցությամբ, ինչպես նաև Մեղրիի համայնքապետարանի, Մեղրիի մարզամշակութային կենտրոնի և ԱՊՀ անդամ պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի աջակցությամբ:

ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Կառավարությունը երկու պաշտոնյա է գործուղել Վաշինգտոն՝ TRIPP ծրագրի շրջանակում

ArmLur.am-ի տեղեկություններով օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 3-ը ներառյալ Վաշինգտոն են գործուղվել կառավարության աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտյոմ Սուջյանը և փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գրասենյակի ղեկավար Վիկտորյա Այվազյանը:

Ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ գործուղման նպատակը TRIPP ծրագրի շրջանակներում ԹՐԻՓՓ զարգացման ընկերության (TRIPP Development Company) կանոնադրական և բաժնետիրական համաձայնագրի շուրջ բանակցությունների նպատակով կառավարության աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ քննարկումների անցկացումն է:

Այսպիսով՝ «Թրամփի ուղի» ծրագրի շուրջ գործընթացը շարունակվում է ոչ միայն քաղաքական և դիվանագիտական մակարդակներում, այլև բավական կոնկրետ աշխատանքներ են իրականացվում իրավական և կազմակերպչական ուղղություններով:

Սյունիքի մարզում քննարկվել է ԹՐԻՓՓ նախագիծը

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության ներկայացուցիչները, ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը, պետքարտուղարության քաղաքականության պլանավորման հարցերով ավագ խորհրդական Ջոն Ասքոնասը՝ AECOM ինժեներական ընկերության ներկայացուցիչների հետ միասին, Գորիսում, Մեղրիում և Կապանում մասնակցել են հանդիպումների՝ քննարկելու «Թրամփի ուղին՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (ԹՐԻՓՓ) ծրագիրը:

Այդ մասին տեղեկանում ենք TRIPP ծրագրի պաշտոնական ֆեյսբուքյան էջում տեղ գտած հրապարակումից:

«Սյունիքի համայնքների ներկայացուցիչներն անմիջականորեն Հայաստանի և ԱՄՆ-ի պաշտոնյաներից տեղեկացել են Հայաստանում ԹՐԻՓՓ-ի իրականացման ընթացքի վերաբերյալ, ուղղել հարցեր, ներկայացրել իրենց տեսակետներն ու քննարկել, թե ինչպես տարածաշրջանային հաղորդակցության ընդլայնումը կարող է նոր տնտեսական հնարավորություններ ստեղծել Հայաստանի, մասնավորապես Սյունիքի համար՝ միաժամանակ աջակցելով Հայաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը:

Նման երկխոսությունը լինելու է շարունակական՝ Հայաստանում ԹՐԻՓՓ-ի կյանքի կոչմանը զուգահեռ համայնքների տեղեկացվածությունն ու ներգրավվածությունն ապահովելու համար»,– նշված է հրապարակման մեջ:

Հայաստանը փորձում է ներգրավել Կենտրոնական Ասիայի երկրներին TRIPP նախագծում

Հայաստանը փորձում է ներգրավել Կենտրոնական Ասիային՝ ակտիվացնելով ջանքերն ԱՄՆ նախագահ Թրամփի անունը կրող հավակնոտ առևտրային միջանցքի՝ «Թրամփի երթուղի» (TRIPP) նախագծի մեկնարկն ապահովելու ուղղությամբ. գրում է Radio Free Europe/Radio Liberty-ն:

Ինչպես նշվում է, առաջարկվող ծրագիրն արժանացել է Վաշինգտոնի աջակցությանը, սակայն հարուցել է Մոսկվայի և Թեհրանի դժգոհությունը:

Նիկոլ Փաշինյանը վերջին շաբաթներին առաջ է մղել Ղազախստանի և Ղրղզստանի ներգրավման հարցը: Սակայն, դիտորդների գնահատմամբ, երկու երկրներն էլ զգուշանում են Ռուսաստանին բարկացնելուց, քանի որ այն Կենտրոնական Ասիայում առանցքային քաղաքական և տնտեսական դերակատար է:

Փաշինյանը TRIPP նախագիծը քննարկել է Ադրբեջանի և Հնդկաստանի ղեկավարների, ինչպես նաև ԱՄՆ ներկայացուցիչների հետ սեպտեմբերի 1-ին Բիշքեկում կայացած Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գագաթնաժողովի ընթացքում:

Ղրղզստանի պաշտոնյա Դանիյար Ամանգելդիևը ռադիոկայանի ղրղզական ծառայությանը հայտնել է, որ կառավարությունը դեռևս պաշտոնական առաջարկ չի ստացել: Թեև տարածաշրջանային հնարավոր գործընկերների մասնակցությունը դեռևս անորոշ է, Հայաստանն ու Միացյալ Նահանգներն առաջ են շարժվում նախագծի հանրային մեկնարկի ծրագրերով:

TRIPP-ն ու Հրվ. Կովկասը. մրցակցությո՞ւն, թե՞ նոր հնարավորություններ Հայաստանի և Վրաստանի համար

2025-ի օգոստոսին Հայաստանի, Ադրբեջանի և ԱՄՆ-ի մասնակցությամբ կնքվեց «Թրամփի ուղու» (TRIPP) մասին փաստաթուղթ, որի նպատակը Հայաստանի հարավով Ադրբեջանի հիմնական մասի և Նախիջևանի միջև հաղորդակցություն ստեղծելն է: Ավելի վաղ՝ 2023-ին, Երևանը ներկայացրել էր «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը, որի նպատակն է տարածաշրջանի փակ հաղորդակցությունների բացումը վերածել ավելի լայն տարանցիկ հնարավորության և Հայաստանը ներառել Արևելք–Արևմուտք ու Հյուսիս–Հարավ կապուղիներում:

Այս զարգացումները նոր հարց են առաջադրում Հարավային Կովկասի տարանցիկ համակարգի համար, որտեղ Վրաստանը տասնամյակներ շարունակ առանցքային դիրք է զբաղեցրել՝ ձևավորելով գործող երկաթուղային ցանց, զարգացնելով իր սևծովյան նավահանգիստները և միջազգային բեռնափոխադրումների հաստատված երթուղիները: Հայաստանի տարածքով նոր ուղիների բացումը կստեղծի մրցակցությո՞ւն երկու երկրների միջև և կնվազեցնի՞ Վրաստանի բացառիկ տարանցիկ դերը, թե՞, հակառակը, կմեծացնի տարածաշրջանով անցնող ընդհանուր բեռնահոսքերն ու Հայաստանի և Վրաստանի տարանցիկ ներուժի փոխլրացման հնարավորությունները:

ԱՄՆ-ի առաջարկած TRIPP ծրագիրը բացի երկաթուղուց ու ավտոճանապարհից, ենթադրում է նաև այլ ենթակառուցվածքների՝ նավթագազային խողովակաշարերի, մալուխների անցման հնարավորություն: Թեև TRIPP-ի ենթակառուցվածքների շինարարության մեկնարկը դեռ չի տրվել, ԱՄՆ-ն ու Հայաստանն արդեն աշխատում են երկաթուղային ինժեներական ուսումնասիրությունների, ներդրումային մեխանիզմների և մասնավոր հատվածի ներգրավման ուղղությամբ:

«Թրամփի ուղին»

«Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (TRIPP — Trump Route for International Peace and Prosperity) նախագիծը համաձայնեցվեց 2025-ի օգոստոսի 8-ին Հայաստանի, Ադրբեջանի և Միացյալ Նահանգների ղեկավարների մասնակցությամբ Վաշինգտոնում: Հայաստանի հարավով մոտ 42 կմ երկարությամբ այս ճանապարհը կապելու է Ադրբեջանի հիմնական մասը նրա էքսկլավ Նախիջևանին, որն էլ իր հերթին միանալու է Թուրքիայի տարածքին: Թուրքիայում արդեն սկսվել է Կարս-Դիլուջու երկաթգծի կառուցումը, որը շրջանցելու է Հայաստանը և միանալու է Նախիջևանին: TRIPP-ի իրականացումը պետք է դիտարկել նաև ավելի լայն՝ Տրանսկասպիական միջազգային տրանսպորտային ուղու՝ (Trans-Caspian International Transport Route - TITR)՝ «Միջին միջանցքի» համատեքստում, որը Կենտրոնական Ասիան Կասպից ծովի, Հարավային Կովկասի ու Թուրքիայի միջոցով կապում է Եվրոպային: TRIPP-ի հնարավոր ինտեգրումն այս հաղորդակցային համակարգին, ի թիվս այլ երկրների, հետաքրքրություն է ներկայացնում Միացյալ Նահանգների ու Եվրամիության համար, որոնք Միջին միջանցքը դիտարկում են որպես այլընտրանք Արևելքի հետ իրենց հաղորդուղիներում:

Միջին միջանցքը

Տրանսկասպիական միջազգային տրանսպորտային ուղին (The Trans-Caspian International Transport Route - TITR) կամ Միջին միջանցքը Չինաստանը Եվրոպային կապող բազմամոդալ առևտրային և բեռնափոխադրումների ցանց է, որը հիմնականում անցնում է Ղազախստանի, Կասպից ծովի, Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի տարածքով:

Ի տարբերություն Հայաստանի, որի տարանցիկ դերը դեռ ձևավորման փուլում է, Վրաստանը տևական ժամանակ առանցքային դիրք է զբաղեցնում Հարավային Կովկասի տարանցիկ համակարգում: Նրա տարածքով է անցնում Միջին միջանցքի կարևոր հատվածներից մեկը, որը Եվրոպային կապվում է ինչպես վրացական սևծովյան նավահանգիստների, այնպես էլ Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղու միջոցով:

Վրաստանով են անցնում նաև Ադրբեջանի նավթ ու գազը հիմնականում եվրոպական շուկաներ հասցնող խողովակաշարերը:

Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին

Հարավային Կովկասում Միջին միջանցքի ամենաառանցքային ուղիներից մեկը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին է, որի երկարությունը 826 կմ է: Շինարարությունը մեկնարկել է 2007-ին, երկաթգիծը շահագործման է հանձնվել 2017-ին:

Վրաստանի դերը առանցքային է Հայաստանի համար. Հայաստանի ապրանքաշրջանառության ավելի քան 70 տոկոսն անցնում է այդ երկրով:

Վրաստանի երկաթուղով են իրականացվում նաև 2025-ի վերջից սկսված ադրբեջանական դիզելային վառելիքի ներկրումները Հայաստան, ինչպես նաև ադրբեջանական տարածքով ղազախական և ռուսական մի շարք ապրանքների փոխադրումները: Մայիսին Հայաստանն ու Թուրքիան հայտարարեցին հայկական կողմի համար Կարս-Ախալքալաք երկաթուղու հասանելիության մասին:

Ներկայում Վրաստանը շարունակում է աշխատել իր տարանցիկ հնարավորությունների ամրապնդման ուղղությամբ: Արդիականացվել է Թբիլիսի-Բաթումի երկաթուղային ուղղությունը, շարունակվում են Ադրբեջանի սահմանից Բաթումիի միջոցով Թուրքիայի սահման ձգվող Արևելք–Արևմուտք ավտոմայրուղու զարգացման աշխատանքները, իսկ Սև ծովի ափին ընթանում է Անակլիայի խորջրյա նավահանգստի կառուցումը:

Տարածաշրջանային կապուղիների տնտեսական հեռանկարները

Հաղորդակցությունների մասին քննարկումներն ու առաջարկվող նախագծերն էապես բարձրացրել են Հարավային Կովկասի ռազմավարական նշանակությունը, որը միջազգային նշանակության երկու անցուղիների՝ Արևելք-Արևմուտք և Հյուսիս-Հարավ (INSTC) միջազգային միջանցքների հատման կետում է:

Թբիլիսիում տեղակայված Տրանսպորտային միջանցքների հետազոտությունների կենտրոնի (Transport Corridor Research Center) տնօրեն Պաատա Ծագարեիշվիլիի համոզմամբ՝ Հայաստանի տարածքում նոր կոմունիկացիաների ստեղծումը, մրցակցություն է առաջացնելու Հարավային Կովկասում: Այդ հաղորդուղիները, ըստ նրա, իրենց արդյունավետությամբ մրցելու են Վրաստանով անցնող Միջին միջանցքի հատվածի հետ: Վրացի փորձագետը նկատի ունի ինչպես TRIPP նախագիծը, այնպես էլ Հայաստանի հաղորդուղիների հնարավոր ապաշրջափակումը, այդ թվում՝ Կարս-Գյումրի երկաթուղու վերագործարկումը:

Հայաստանցի տնտեսագետ Սուրեն Պարսյանը նույնպես կարծում է, որ հաղորդակցությունների, այդ թվում՝ TRIPP-ի բացումով, կապուղիների հարցում մրցակցություն կստեղծվի տարածաշրջանում, որը կարող է հատկապես արտահայտվել՝ Ադրբեջանը Թուրքիային կապող ուղղության (Բաքու-Թբիլիսի-Կարս երթկաթուղի) հետ համեմատությունում: Նա կարծում է, որ TRIPP-ը կարող է այլընտրանքային ուղղություն լինել, սակայն այն լրջորեն չի ազդի Վրաստանի տարանցիկ դերի վրա:

«Միջին միջանցքն արդեն գործող լոգիստիկ համակարգ է՝ նավահանգիստներով, երկաթուղով, օպերատորներով, մաքսային ընթացակարգերով և ձևավորված հաճախորդներով»,- ասում է նա: Այնուամենայնիվ, Պարսյանն ընդունում է, որ կախված ժամանակի, մաքսատուրքերի և մի շարք այլ գործոններից՝ Վրաստանը շրջանցող ճանապարհները կարող են իրենց գրավչությունն ունենալ: Ճանապարհների հուսալիությունն իր հերթին կարող է հանգեցնել տարածաշրջանում բեռների հոսքի ավելացմանը, ինչպես նաև գների նվազեցմանը:

Թեև վերջին տարիներին Միջին միջանցքով անցնող բեռնափոխադրումներն աշխուժացել են, բայց դրանց ծավալը համեմատության մեջ մեծ չէ. 2024-ին Միջին միջանցքով տեղափոխվել է 4,5 մլն տոննա բեռ, մինչդեռ, օրինակ, մինչև ռուս-ուկրաինական պատերազմը Ռուսաստանի տարածքով անցնում էր տարեկան ավելի քան 170 մլն տոննա բեռ: Ներկայում Չինաստանը Եվրոպային կապող հիմնական ուղղությունն անցնում է Հնդկական օվկիանոսով ու Սուեզի ջրանցքով:

Ծագարեշվիլիի գնահատմամբ՝ 4,5 մլն տոննա բեռի մեծ մասը վերաբերում է ղազախական հատվածին, և նրա ընդամենը քիչ տոկոսն է բաժին հասել վրացական նավահանգիստներին:

Օրբելի կենտրոնի ավագ փորձագետ Ջոնի Մելիքյանի գնահատմամբ՝ Միջին միջանցքով բեռնափոխադրումներն աճի միտում ունեն: Նա չի բացառում հայկական և վրացական ենթակառուցվածքների միջև որոշակի մրցակցությունը, բայց նաև նշում է, որ տարանցիկ փոխադրումների աճի պարագայում երկու երկրները կարող են սիներգիա ստեղծել:

Հայ փորձագետները, բացի Միջին միջանցքով անցնող կապուղիներից, կարևորում են Հյուսիս-Հարավ միջազգային միջանցքի դերը, որի նշանակությունը կտրուկ կարող է ավելանալ Հայաստան-Թուրքիա և Հայաստան-Ադրբեջան սահմանների բացման պարագայում: Առաջին հերթին հաշվի է առնվում Պարսից ծոց-Սև ծով տրանսպորտային ուղին, որը Հայաստանի տարածքով կարող է միանալ վրացական երկաթուղիներին և դուրս գալ Եվրոպա:

Սուրեն Պարսյանի խոսքով՝ դա հայկական կողմին թույլ կտա ոչ միայն պարզապես մրցակցել Միջին միջանցքի վրացական հատվածով անցնող բեռների հետ, այլև դառնալ լոգիստիկ հանգույց, որտեղ բեռների տեղափոխումից բացի կիրականացվեն պահեստավորում, մաքսային տեսակավորում և այլ ծառայություններ:

«ԱՊՐԻ Արմենիա» հետազոտական կենտրոնի՝ 2026-ի ապրիլին հրապարակած վերլուծությունը նշում է, որ լիակատար ապաշրջափակումը կբարձրացնի տարածաշրջանի մակրոտնտեսական դիմակայունությունն ու ներդրումային գրավչությունը: Ըստ զեկույցի՝ ամբողջական ապաշրջափակումից Հայաստանը կշահի դեպի Թուրքիա և Ադրբեջան արտահանման ու զբոսաշրջային հոսքերի ակտիվացմամբ, Նախիջևանի միջոցով դեպի Իրան ուղիղ երկաթուղային ելք ստանալով և սուվերեն ֆինանսական ռիսկերի նվազմամբ: Ադրբեջանը կշահի Նախիջևանը Հյուսիս-Հարավ առանցքային տարանցիկ հանգույցի վերածելով, դեպի Թուրքիա ավելի էժան ու արագ երկաթուղային այլընտրանք ստանալով և տարանցիկ եկամուտների հաշվին նավթագազային գներից կախվածությունը թուլացնելով, իսկ Վրաստանը կշահի Միջին միջանցքում իր առանցքային դերի պահպանմամբ, ինչպես նաև Պարսից ծոց–Սև ծով երթուղու գործարկման շնորհիվ Իրանից դեպի իր սևծովյան նավահանգիստներ ուղիղ երկաթուղային բեռնահոսքերի և տարանցիկ եկամուտների ավելացմամբ:

Ճանապարհների բացումը տեսականորեն նվազեցնում է տարածաշրջանի անվտանգային ռիսկերը՝ նպաստելով տարանցիկ ուղիների գրավչությանը: Կովկասի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը նշում է, որ, այնուամենայնիվ, Հարավային Կովկասի տրամաբանությունը հակառակն է:

«Նախ պետք է քաղաքական հարցերը լուծել, հետո նոր անցնել հաղորդակցություններին,– ասում է նա: **– Մեծ հաշվով բոլոր հարցերը կախված են քաղաքական կամքից»:** Նա բերում է աբխազական երկաթուղու օրինակը, որն աշխարհագրորեն ու ֆինանսապես ձեռնտու է, սակայն գերի է քաղաքական գործոններին:

Վրացի քաղաքագետ Թոռնիկե Շարաշենիձեն ևս նշում է, որ աշխարհաքաղաքականությունը վեր է տնտեսական նպատակահարմարություններից: Նա թերահավատորեն է վերաբերվում TRIPP-ին՝ նշելով, որ դրան դեմ են Իրանն ու Ռուսաստանը:

Նա չի կարծում, որ «Թրամփի ուղու» գործարկումը կարող է էապես ազդել Վրաստանի տարանցիկ դերի վրա: Վրաստանը, ըստ նրա, տարանցիկ նշանակությունը կպահպանի ձևավորված ենթակառուցվածքների և սևծովյան նավահանգիստների դերի շնորհիվ:

Իսկանդարյանը կարճաժամկետ հեռանկարում TRIPP-ի գործարկման հեռանկարները մշուշոտ է գնահատում, բայցևայնպես նշում է, որ դրա իրականացման պարագայում Վրաստանի բացառիկ դերը որոշ չափով կփոխվի:

Այսպիսով, Հարավային Կովկասում նոր հաղորդակցությունների՝ TRIPP-ի կամ առավել լայն ապաշրջափակման նախաձեռնությունների գործարկումը ոչ այնքան սպառնում է սասանել Վրաստանի տարանցիկ դերը, որքան առաջ է մղում տարածաշրջանային ենթակառուցվածքների վերադասավորման և հնարավոր փոխլրացման նոր օրակարգ: Թեև նոր երթուղիների բացումն անխուսափելիորեն կառաջացնի որոշակի տնտեսական մրցակցություն և կթուլացնի Վրաստանի բացառիկ մենաշնորհային դիրքը, այն միաժամանակ կարող է էականորեն ավելացնել տարածաշրջանով անցնող ընդհանուր բեռնահոսքերը՝ հատկապես Հյուսիս-Հարավ և Պարսից ծոց–Սև ծով առանցքներում: Այս տնտեսական հեռանկարների իրագործումը շարունակում է կախված մնալ ավելի լայն աշխարհաքաղաքական զարգացումներից:

CIVILNET.AM

Պատերազմից հետո Կոռնիձորը նոր ապրուստի միջոց է փնտրում սահմանի կողքին

44–օրյա պատերազմը Կոռնիձորում սրբագրել է կյանքը, ու հիմա ստիպված են նորից մտածել՝ ինչպե՞ս աշխատել, ինչպե՞ս տեղում պահել երիտասարդներին և ինչպե՞ս շարունակել ապրել մի վայրում, որտեղ սահմանն ավելի է մոտեցել:

Մերի Հակոբյանը Կոռնիձորում ժամանակին մոտ 30 գլուխ անասուն էր պահում: Այսօր նրա տնտեսությունում ընդամենը 3-ն են մնացել: 44–օրյա պատերազմից հետո սահմանը մոտեցել է գյուղին, նախկին արոտավայրերն այլևս հասանելի չեն, իսկ անասունը միայն գնված կերով պահելը գյուղացու համար չափազանց թանկ է:

«Մոտ 30 անասուն եմ ունեցել, հիմա՝ 3 հատ: Պատերազմից հետո սահմանները մոտեցան, դրանից հետո չկարողացանք պահել, որովհետև արոտավայր չունենք: Այն ժամանակ Լաչինի Ծաղկաբերդի կողմերում էինք պահում: Ամուսնուս հետ կարողանում էինք պահել, շատացնել, աշխատել, ստեղծել: Հիմա ես էլի ուզում եմ նույն գործով զբաղվել, բայց որտե՞ղ պահեմ անասունը»,– Sputnik Արմենիայի հետ զրույցում ասաց Կոռնիձորի բնակիչ Մերի Հակոբյանը:

Նրա խոսքով՝ անասունները ստիպված է եղել էժան վաճառել: Հիմա երեք կովն էլ պահելը ծախսատար է. մեկ տուկ խոտը, նրա ասելով, 1000 դրամ արժե:

Մերին Կոռնիձորում միակը չէ, որ պատերազմից հետո կրճատել է անասնագլխաքանակը: Գյուղում գրեթե նույն պատմությունն է բոլորի մոտ. նախկին արոտավայրերի մի մասը հասանելի չէ, սահմանն ավելի մոտ է, ու մարդկանց մի մասն այլևս չի համարձակվում անասունը հեռու տանել:

Կոռնիձորի բնակիչ Նատաշա Դանիելյանն էլ է պատերազմից հետո վաճառել կովերը:

«Երբ Արցախը կար, ռիսկով անասուններ էինք պահում, բայց անձամբ մենք մեր կովերը ծախել ենք, որովհետև վախենում ենք դաշտ տանել. թուրքերը սարերի վրա են: Մեր գյուղում չէ, բայց հարակից գյուղերում դեպքեր են եղել, որ անասուններին տարել են: Մարդիկ արդեն վախենում են անասուն պահել»,– ասաց նա:

Դանիելյանի հաշվարկով՝ իրենց փողոցում անասուն պահող մոտ 4 ընտանիք է մնացել, այն էլ՝ փոքր քանակով:

Նրանց հիմա այլևս միայն կերի գինն ու ձմռան պաշարը չեն մտահոգում. նախ պետք է հասկանան՝ որտե՞ղ են արածեցնելու անասունը և որքանո՞վ է անվտանգ այն դաշտ տանելը:

«Մտածում ենք՝ ինչպես անենք, որ էլի այստեղ ապրենք»,– նշեց Դանիելյանը:

Տեղ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, Կոռնիձորի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Ամարյանն էլ չհերքեց՝ անվտանգության նոր պայմանները ստիպում են փոխել գյուղում տնտեսություն վարելու տրամաբանությունը:

...Կոռնիձորի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Ամարյանն չհերքեց՝ անվտանգության նոր պայմանները ստիպում են փոխել գյուղում տնտեսություն վարելու տրամաբանությունը:
...Հիմա հարցն այլևս միայն վարելահողերն ավելացնելը կամ ավելի շատ ցորեն ցանելը չէ: Պետք է գտնել այնպիսի զբաղմունք, որը թույլ կտա մարդկանց մնալ սահմանամերձ գյուղում:

Նրա խոսքով՝ հիմա հարցն այլևս միայն վարելահողերն ավելացնելը կամ ավելի շատ ցորեն ցանելը չէ: Պետք է գտնել այնպիսի զբաղմունք, որը թույլ կտա մարդկանց մնալ սահմանամերձ գյուղում:

«Նկատի ունենալով, որ ադրբեջանցին եկել՝ մեր սահմանին նստել է, մտածում ենք ոչ թե վարելահողերը շատացնել կամ ցորեն ցանել, այլ այնպիսի տնտեսություն վարել, որը շահավետ կլինի գյուղում ապրելու համար: Օրինակ՝ ջերմոցային տնտեսություններ: Մարդիկ ոչ թե արոտավայրում պետք է անասուններ պահեն, այլ խելացի անասնագոմերում՝ տոհմային ու ցեղական անասուններ: Այսինքն՝ ստեղծված իրավիճակում մենք մտածում ենք՝ ինչպես անենք, որ էլի այստեղ ապրենք»,– լրագրողների հետ զրույցում ասաց Ամարյանը:

Կոռնիձորցիներն ասում են՝ կյանքը շարունակվում է: Մարդիկ աշխատում են, երեխաները դպրոց են գնում, նոր տներ են կառուցվում: Բայց անվտանգության հետ կապված անհանգստությունը մարդկանց առօրյայից չի անհետացել:

Այսինքն՝ Կոռնիձորը փորձում է հարմարվել մի իրականության, որտեղ նախկին տնտեսավարման ձևերը միշտ չէ, որ հնարավոր են: Բայց դրա համար միայն նոր անասնագոմ կամ ջերմոց ունենալը քիչ է:

Երիտասարդները «կամաց-կամաց» դուրս են գալիս» Կոռնիձորից

Գյուղացիների հետ զրույցում շատ արագ ի հայտ է գալիս մյուս խնդիրը՝ աշխատանքը: Պաշտոնական թվերով՝ Կոռնիձորում գրանցված է 1239 բնակիչ, փաստացի ապրում է մոտ 1000 մարդ: Դպրոցում սովորում է 123 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում ևս մոտ 30 երեխա:

Վարչական ղեկավար Ամարյանը պնդում է՝ Արցախի ամբողջական բռնազավթումից հետո գյուղից արտագաղթ չի եղել:

«Կոռնիձորից արտագաղթ չի եղել, Կոռնիձորը միշտ եղել է այստեղ և լինելու է: Մենք այստեղ ենք ծնվել, այստեղ էլ ապրելու ենք: Ոչ մի կոռնիձորցի գյուղից չի գնացել, ընդհակառակը՝ Արցախից բռնագաղթած ընտանիքներ են ապրում գյուղում»,– շարունակեց նա:

Ամարյանի տվյալներով՝ Կոռնիձորում հաստատվել է Արցախից բռնի տեղահանված 27 ընտանիք, որոնցից 5–6-ն արդեն բնակարան են գնել պետական հավաստագրերով:

Գյուղացիների նկարագրած պատկերը, սակայն, ավելի անհանգիստ է:

Նատաշա Դանիելյանն ասում է՝ երիտասարդները «կամաց-կամաց դուրս են գալիս» Կոռնիձորից: Գնում են հիմնականում Գորիս, Կապան և Երևան՝ աշխատանք գտնելու:

«Մեծերն ասում են՝ Կոռնիձորում ծնվել ենք, այստեղ էլ կմեռնենք: Բայց ջահելները գնում են, որովհետև աշխատատեղ չկա»,– մանրամասնեց նա:

Մերի Հակոբյանի համար էլ առաջին խնդիրը զբաղվածությունն է:

«Աշխատատեղ չկա, զբաղվածություն չկա: Մարդիկ պետք է աշխատանք ունենան, որ կարողանան իրենց կարիքները հոգալ: Շատ սոցիալապես անապահով ընտանիքներ ունենք: Հետո էլ սահմանն է»,– ասաց Հակոբյանը:

Ու այստեղ գյուղի երկու հիմնական խնդիրը նորից հատվում են. սահմանը սահմանափակել է հողից ու անասունից եկամուտ ստանալու հնարավորությունը, իսկ այլ աշխատանք գյուղում գրեթե չկա:

Մեծ դպրոց է կառուցվում, բայց գյուղացին գործարան է ուզում

Կոռնիձորում նոր, մեծ դպրոց է կառուցվում: Նատաշա Դանիելյանը նայում է շինարարությանը, բայց այլ բան է մտածում: Նրա համար գյուղը պահելու առաջնահերթությունը աշխատատեղն է:

«Գյուղում հսկա դպրոց են սարքում, բայց աշակերտ չկա: Դրա փոխարեն թող մի գործարան սարքեին, ջահելներն աշխատեին, դուրս չէին գա գյուղից: Մեծերս դաշտում կաշխատեինք, իսկ ջահելները՝ գործարանում»,– ասաց նա:

Մերի Հակոբյանն էլ դպրոցի մասին խոսելիս մեկ այլ բաց է մատնանշում:

Երաժշտությունը նրանց ընտանիքում սերնդեսերունդ է փոխանցվել: Մերին կուզեր իր գիտելիքները փոխանցել գյուղի երեխաներին, բայց բարձրագույն մասնագիտական կրթություն չունենալու պատճառով դասավանդել չի կարող:

Իսկ Կոռնիձորում երաժշտական դպրոց ընդհանրապես չկա:

«Գյուղում այնքան տաղանդավոր երեխաներ կան: Ինչո՞ւ երաժշտական ոչ մի բան չլինի: Դպրոց են կառուցում, բայց մի երաժշտական դպրոցն ի՞նչ է, որ չբացեն»,– հարց է բարձրացնում Մերին:

Մերիի պատմությունն առաջին հայացքից սահմանի հետ կապ չունի: Բայց հենց այսպիսի փոքր թվացող խնդիրներից է կազմվում գյուղում մնալու կամ չմնալու ընտրությունը՝ աշխատանք, երեխայի կրթություն, զբաղմունք, ընտանիքի եկամուտ:

«Մենք քնում ենք վախենալով»

Բոլոր քննարկումներից հետո գյուղացիների խոսակցությունը կրկին վերադառնում է սահմանին:

Կոռնիձորցիներն ասում են՝ կյանքը շարունակվում է: Մարդիկ աշխատում են, երեխաները դպրոց են գնում, նոր տներ են կառուցվում: Բայց անվտանգության հետ կապված անհանգստությունը մարդկանց առօրյայից չի անհետացել:

«Մենք քնում ենք վախենալով: Ասում են՝ խաղաղություն է, բայց դա նշանակություն չունի. թուրքը քո կողքին է, ո՞նց կարող ես հանգիստ քնել: Գյուղում պարեկներ չեն շրջում, որ գոնե զգանք՝ մեզ հսկում են»,– ասում է Նատաշա Դանիելյանը:

Պատերազմից հետո Կոռնիձորում փոխված կյանքը Մերիի, Նատաշայի և մյուսների օրինակով է երևում: Գյուղը սրբագրել է կյանքն ու հիմա ստիպված է նորից մտածել՝ ինչպե՞ս աշխատել, ինչպե՞ս պահել երիտասարդներին և ինչպե՞ս շարունակել ապրել մի վայրում, որտեղ պատերազմից հետո սահմանն ավելի է մոտեցել:

Գիրք Հին Գորիսի՝ Վերիշենի մասին

Հայաստանի անկախությունից հետո՝ 1990-ականներից սկսած, տարբեր բնակավայրերում հայտնվեցին մարդիկ, ովքեր շարադրեցին հարազատ գյուղի՝ իրենց բնօրրանի պատմությունը: Այդպիսով, բազում դեմքեր, դեպքեր, իրադարձություններ փրկվեցին մոռացության թանձր մշուշից և փոխանցվեցին հաջորդ սերունդներին: Գրավիչն այն է, որ այդ հայրենանվեր նախաձեռնությունը շարունակվում է նաև մեր օրերում, նվիրյալներ միշտ էլ գտնվում են:

Ահավասիկ, մեր թերթի մեծ բարեկամ, խորհրդային տարիներին մեծ համարում ունեցող «Ավանգարդ» թերթի նախկին գլխավոր խմբագիր Գագիկ Հայրումյանն ընթերցողի սեղանին է դրել «Հին Գորիս կամ Ձագեձորից մինչև Վերիշեն» աշխատությունը: Այն ամփոփող երկու մեծադիր գրքի թողարկումն իրականացվել է պոլիգրաֆիական բարձր մակարդակով, գունավոր տպագրությամբ: Մի խոսքով, Գագիկ Հայրումյանն իրեն բնորոշ աշխատասիրությամբ համագյուղացիների (և ոչ միայն) մեջ վառ պահեց Վերիշենի՝ Հին Գորիսի պատմական հիշողությունը:

Աշխատության առաջին գիրքը բովանդակում է գյուղի աշխարհագրությունը, պատմությունը, բնակչությունը, կենցաղն ու սովորույթները, տարբեր ժամանակների տնտեսական հարաբերությունները: Առանձին բաժիններում անդրադարձ է կատարվում կրթական համակարգին, գիտությանը, հասարակական-քաղաքական կյանքին, մշակույթին ու առողջապահությանը: Ներկայացվում են խոհանոցն ու ավանդական ճաշերը:

Երկրորդ գիրքը ներկայացնում է գյուղի տոհմագրությունը, որն ընդգրկում է ավելի քան 200 տարի՝ 19-րդ դարի սկզբից մինչև 2019 թվականը: Այն պարունակում է գյուղի տոհմերի, գերդաստանների և ընտանիքների մասին տվյալներ, ինչպես նաև Մինքենդից՝ 1905 թ. հայ-թաթարական հակամարտությունների հետևանքով, Հին Գորիս գաղթած ընտանիքների տոհմագրությունը:

Գիրքը ներառում է նաև գյուղի անունադարանը:

Աշխատության մեջ շարադրված հարուստ փաստական նյութը քաղված է Հայաստանի ազգային, Ռուսաստանի Դաշնության պետական, զինվորական, սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվների փաստաթղթերից, մամուլում հրապարակված հոդվածներից, առկա գրականությունից և այլ աղբյուրներից:

Երկհատորյակի հրատարակման նախապատրաստումը և տպագրությունն իրականացվել է Սպարտակ Ամարյանի ընտանիքի ֆինանսական օժանդակությամբ:

Շնորհավորում ենք Գագիկ Հայրումյանին՝ այս շքեղ հրատարակությունն ընթերցողի սեփականությունը դարձնելու համար, մաղթում ամուր առողջություն, մերօրյա մարտահրավերներին դիմակայելու տոկունություն, ստեղծագործական թարմ ներշնչանքներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Արցախ Միությունը դատապարտում է Ադրբեջանի կողմից կազմակերպված դիվանագիտական շոուայցը՝ որպես Արցախի հայկական ինքնության հերքման քարոզչական գործիք

Արցախ Միությունը կտրականապես դատապարտում է սեպտեմբերի 11-12-ին Ադրբեջանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի՝ 58 երկրների և 9 միջազգային կազմակերպությունների 150 ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված շոուայցը դեպի բռնազավթված Արցախ (Լեռնային Ղարաբաղ):

Միության տարածած հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. **«Սա ալիևյան ցեղասպանական ռեժիմի կողմից տարիներով շարունակվող համակարգված արշավի հերթական դրվագն է, որի նպատակն է միջազգային հանրության աչքին օրինականացնել Արցախի բռնազավթումն ու էթնիկ զտումը՝ դրանք ներկայացնելով որպես «վերածնունդ» և «զարգացում»:**

Դիվանագետներին Ստեփանակերտում ներկայացված զբոսայգին կառուցվել է հայերի քանդված տների և հուշարձանների տեղում, որը ցեղասպանական և օկուպացիոն քաղաքականության շարունակականության հստակ ապացույց է:

Ադրբեջանի ցեղասպան բռնապետի օգնական Հիքմեթ Հաջիևը դիվանագետներին Գանձասարի և Դադիվանքի հայկական վանական համալիրները ներկայացրել է որպես «հին կովկասյան աղվանական» ժառանգություն՝ դրանք կապելով իբր «աղվանական իշխան Հասան Ջալալի» անվան հետ, մինչդեռ Հասան-Ջալալյանների տոհմը եղել է հայ իշխանական տոհմ, իսկ երկու վանքերն էլ դարեր շարունակ եղել են Հայ Առաքելական Եկեղեցու գործող կենտրոններ՝ իրենց հայերեն արձանագրություններով և շարունակական հայկական ծիսակարգով: Սա «աղվանացման» քաղաքականության հստակ դրսևորում է, որի իրական նպատակն է Արցախի քրիստոնեական ժառանգությունից պատմականորեն զրկել հայ ժողովրդին: Նույն այցի ընթացքում Հ. Հաջիևը հերթական կեղծ պնդումն է արել, թե իբր Գանձասարում ցուցադրված հայկական հնագույն ձեռագրերը (փաստացի՝ դրանց պատճենները) «կեղծ» են, և թե՛ իբր Գանձասարը, թե՛ Դադիվանքը «օկուպացիայի տարիներին» «վերականգնման քողի տակ» կրել են աղավաղումներ: Նման մեղադրանքները հնչում են այն կողմից, որը, ըստ բազմաթիվ անկախ ապացույցների, փաստացի պատասխանատու է Արցախի հայկական եկեղեցիների, խաչքարերի, տապանաքարերի և այլ հուշարձանների ոչնչացման կամ աղավաղման համար:

Այս համատեքստում Արցախ Միության նախագահ Արտակ Բեգլարյանը հայտարարել է. «Ադրբեջանը շարունակում է դիվանագիտական պատվիրակությունների այցերն օգտագործել իբրև մեխանիզմ՝ իր իսկ կողմից Արցախում իրականացված ցեղասպանական ոչնչացումն ու ինքնության բռնի ջնջումը «վերականգնման» քողի տակ ներկայացնելու համար: Մենք պահանջում ենք միջազգային հանրության պատասխանատու ներկայացուցիչներից չդառնալ հանցագործությունների լեգիտիմացման ու պատմության կեղծման գործիք, այլ պահանջել անկախ ու թափանցիկ հետաքննություն և հրապարակայնորեն արտահայտվել Արցախի ժողովրդի բռնի տեղահանման, նրա ժառանգության ոչնչացման և բազմաթիվ իրավունքների խախտման դեմ»:

Հիշեցնում ենք, որ Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) 2023 թ. նոյեմբերի 17-ի հրամանը, որն ուժի մեջ է և պարտադիր է կատարման համար, Ադրբեջանից պահանջում է ապահովել 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո տեղահանված անձանց անվտանգ, անարգել և արագ վերադարձը, կանխել նրանց հետագա բռնի տեղահանումը, պաշտպանել ու պահպանել նրանց ինքնության և սեփականության փաստաթղթերն ու գրանցումները, ինչպես նաև վերահաստատում է Դատարանի նախորդ՝ 2021 և 2023 թթ. հրամանները: Միաժամանակ հիշեցնում ենք, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 54-րդ նստաշրջանի 40 երկրների 2023 թ. հոկտեմբերի 11-ի համատեղ հայտարարությունը հստակորեն պահանջել է Ադրբեջանից երաշխավորել բնիկ բնակչության անվտանգ, արժանապատիվ և կայուն վերադարձը, պաշտպանել հայկական մշակութային ու կրոնական ժառանգությունը և ապահովել Արցախ անկախ միջազգային մուտքն ու մոնիտորինգը: Այս այցին մասնակցող դիվանագիտական կորպուսի մեջ ընդգրկված են հենց այդ հայտարարության տակ ստորագրած բազմաթիվ երկրների ներկայացուցիչներ, ինչը նրանց մասնակցությունը Ադրբեջանի կողմից միակողմանիորեն կազմակերպված այս տուրին դարձնում է ուղղակի հակասություն իրենց իսկ պաշտոնապես ստանձնած պարտավորությունների հետ:

Ելնելով վերոգրյալից՝ մենք պահանջում ենք.

1. Անհապաղ ապահովել ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ անկախ միջազգային մասնագիտական առաքելությունների անարգել և շարունակական մուտք Արցախի բոլոր հայկական պատմամշակութային ու կրոնական հուշարձաններ՝ դրանց ներկա վիճակի անկախ փաստագրման նպատակով, համաձայն ԱՄԴ 2023 թ. նոյեմբերի 17-ի հրամանի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 40 երկրների 2023 թ. հոկտեմբերի 11-ի հայտարարության և Եվրոպական խորհրդարանի վերաբերելի բանաձևերի:

2.Դիվանագիտական կորպուսի անդամ պետություններից և միջազգային կազմակերպություններից՝ հրաժարվել մասնակցելուց Ադրբեջանի պետության կողմից կազմակերպված և ուղեկցվող շրջայցերից՝ քանի դեռ ապահովված չեն անկախ ստուգման, թափանցիկության և հայկական կողմի մասնակցության պատշաճ երաշխիքները:

3.Արդեն մասնակցած և ապագայում մասնակցելիք դիվանագետներից ու այլ գործիչներից՝ հրապարակային և հստակ գնահատականներ տալ Արցախի բնիկ հայ բնակչության բռնի տեղահանման և նրա մշակութային ու կրոնական ժառանգության ոչնչացման ու յուրացման դեպքերին՝ չդառնալով Ադրբեջանի քարոզչության և միջազգային լեգիտիմացման գործիք:

4.Հայաստանի Հանրապետության իշխանություններից՝ որպես հայ ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանության երաշխավոր և Արցախից բռնի տեղահանված բնակչության հյուրընկալ պետություն, պաշտոնապես և հրապարակայնորեն արձագանքել այս այցին ու հայ ժողովրդի պատմության կեղծման քաղաքականությանը և միջազգային բոլոր հարթակներում հետևողականորեն պաշտպանել Արցախի ժողովրդի իրավունքները:

5.Կրկին հիշեցնում ենք միջազգային հանրության ներկայացուցիչներին Արցախի բռնի տեղահանված շուրջ 150,000 բնակիչների անվտանգ ու արժանապատիվ վերադարձի իրավունքի, ինչպես նաև Բաքվում պահվող հայ պատանդների անհապաղ ազատման անհրաժեշտության մասին, որոնք նվազագույն նախապայմաններ են տարածաշրջանում կայուն ու տևական խաղաղության ապահովման համար:

Արցախի հարցը կարող է փակվել միայն այն ժամանակ, երբ մեր հավաքական ու անհատական իրավունքները վերականգնվեն ամբողջապես և ամուր ու կայուն կերպով երաշխավորված լինեն միջազգային հանրության կողմից:

Վոլոդյա Մարտիրոսյան. այսպիսի մարդկանցով է հողը հայրենիք դառնում

Օրեր առաջ «Սյունյաց երկրի» հատուկ համարում խոսակցություն բացեցինք Կապանի երախտավոր ավագների մասին, ովքեր մեզ հետ են:
Նաև խոստովանեցինք, որ թերթային մեկ համարում, որքան էլ ծավալուն լիներ այն, չէինք կարող բոլորին անդրադառնալ:
Պարտավորվեցինք՝ ժամանակ առ ժամանակ ներկայացնել մյուս երախտավորներին ևս...





Խոսքն այսօր Վոլոդյա Մարտիրոսյանի մասին է, ում գիտակցական կյանքը սերտորեն առնչվում է հայրենի Շիշկերտ, ինչպես և Ծավ գյուղերի հետ:

Վոլոդյան սերում է Շիշկերտի հայտնի Կոստանդաց գերդաստանից: 1920-1940 թթ. հասարակական-քաղաքական բախտորոշ անցքերն անդրադարձ ունեցան նաև այդ գերդաստանի վրա:

Վոլոդյա Մարտիրոսյանի ընտանիքը ևս անմասն չմնաց ստալինյան բռնաճնշումներից: Պապը՝ Ալեքսան Կոստանդյանը, առաջին համաշխարհային պատերազմի մասնակից էր, ուներ ցարական բանակի հարյուրապետի կոչում: 14 տարի ծառայել է ցարական բանակում: Նրա նվիրված ծառայությունը գնահատվել է երկու Գեորգիևյան խաչով: 1921 թվականին եղել է Գարեգին Նժդեհի զինակիցը և վաշտապետը, օգնել Սյունիքը Հայաստանի կազմում պահելու գործին:

Ալեքսանը ՀՅԴ անդամ լինելու և իբր հակախորհրդային քարոզչություն անելու մեղադրանքով հանիրավի բռնադատվել և գնդակահարվել է: 1938 թվականի փետրվարին հորը՝ Սամսոնին, ևս աքսորել են, տաժանակրությունը կրել է նախ՝ Նոր երկիր կղզում, հետո՝ Նորիլսկում: Աքսորից վերադարձել է 1947 թվականին: Մայրը ուրիշների տանը նոքարություն անելով մի կերպ պահել է երեք երեխային: Եղբայրներից մեկին չորրորդ դասարանում ստիպել են թողել ուսումը և հովվություն է արել, որ մի կտոր հաց վաստակի: Այդպիսին էր ժամանակի դաժան տրամաբանությունը...

Վոլոդյա Մարտիրոսյանը 1950-ին է ծնվել, ութամյա կրթությունը Շիշկերտում է ստացել, 9-րդ դասարանը սովորել է Կապանի Հունան Ավետիսյանի անվան թիվ 9 դպրոցում, 10-րդը՝ Շիկահողի միջնակարգ դպրոցում: Հետո եկավ միջին մասնագիտական կրթություն ստանալու ժամանակը (Քաջարանի շինարարական տեխնիկում): Ուսմանը զուգընթաց աշխատում էր, նաև վարորդական դասընթացներում ուսանելուց հետո՝ մեքենա վարելու վկայական ստացավ: Դա նաև այն ժամանակ էր, երբ 1968 թվականին Քաջարանում երկրաշարժ եղավ:

Երբ խորհրդային բանակում ծառայեց և տուն վերադարձավ (1972 թ. աշնանը), իրենց ընտանիքը Շիշկերտից տեղափոխվել էր Ծավ: Ծնողները ծեր էին, որոշեց նրանց մենակ չթողնել, չհեռացավ գյուղից, բախտ չորոնեց անծանոթ ափերում ...

1978 թվականից Ծավի գյուղխորհրդի քարտուղարն էր, 1985-ից սովորեց Բաքվի բարձրագույն կուսակցական դպրոցում, ուսման ավարտին սկսվեց Արցախյան շարժումը, տեղի ունեցան սումգայիթյան ջարդերը... Կուսակցական դպրոցն ավարտեց Սարատովում: 1988-ից հետո Ծավի կոլտնտեսության կուսկազմակերպության քարտուղարն էր: 1991-ից այլընտրանքային կարգով ընտրվեց գյուղխորհրդի նախագահ: Մի բարդ ժամանակաշրջանում ստանձնեց այդ պաշտոնը՝ հողի և անասնագլխաքանակի սեփականաշնորհում, այլ իրադարձություններ: Այդ ծանր ժամանակներում կազմակերպեց գյուղամիջյան ընդհանուր առմամբ մեկ կիլոմետր երկարությամբ ճանապարհի ասֆալտապատումը:

Այս մասին իր անտիպ «Տարվա հինգ եղանակները» գրքում ուշագրավ տեղեկություններ է հայտնում պատմաբան Գրիշա Սմբատյանը: Նաև Վոլոդյային մի դիպուկ բնութագրում է տալիս՝ քաոսի գյուղապետ. **«Ծանրացել էր գյուղախմբի ղեկավարի գործը: Մի քանի գյուղ, միմյանց հանդեպ պահանջատեր և չհանդուրժող, պատերազմն էլ դռներն էր թակում: Քաոսի գյուղապետ... Որի՞ն զսպեր, սաստեր, որի՞ն համոզեր: Պարտադրված հողաբաժանում էր: Փորձում էր գոնե արդարացի սեփականաշնորհում իրականացնել էն դեպքում, երբ ատամները սրած չորս կողմից վրա էին տալիս, իրարից խլում էին, գրում, հա գրում էին: Գյուղերի տեղը չիմացող մարդիկ կային, որ դրսից եկել, ուզում էին հողատեր դառնալ, իսկ ինքը պիտի սրանց էլ հեռացներ ասպարեզից: Քաոսի գյուղապետին հաջողվեց անհամեմատ արդարացի հողաբաժանում կատարել: Բոլորի աչքի առաջ սեղանին թափված ծրարների միջից վիճակահանության կարգով ծրարը քաշեց որդին՝ պատանի Սասունը: Իսկ մյուս գյուղերի մասին լեգենդներ էին պտտվում. հողի և ընկուզենիների տեր դարձան անտառտնտեսության աշխատակիցներ, շրջկոոպի ու տորգի պահեստների պահեստապետեր, կենտրոնի ռեստորանների մատուցողներ, հյուրանոցների տնօրեններ և իրենք՝ գյուղապետերը»:**

1992-ից սահմանամերձ Ներքին Հանդը, Ծավը ներքաշվեցին պատերազմական իրադարձությունների հորձանուտը: Եթե ասել, որ Վոլոդյա Մարտիրոսյանը դրանց կենտրոնում էր, կնշանակի համարյա բան չասել:

Կապանյան ազատամարտում ցավալի տարեթիվ է 1993 թվականի ապրիլի 10-ը: Դա 1992 թ. ապրիլի 24-ին սկսված հայ-ադրբեջանական հակամարտության առաջին լուրջ ռազմական բախումն էր: Մինչ այդ սահմանային միջադեպեր էին լինում՝ մարդկանց գերեվարում, դիպուկահարների կրակոցներ և անասնագողություններ: Փաստորեն այդ ժամանակ եղան ռազմական գործողություններ: Թշնամին մտավ հարևան գյուղը՝ Սրաշեն: Իրենք Ծավից օգնության հասան: Այդ օրվա իրադարձությունները և մարտական գործողությունները մանրամասնորեն է ներկայացնում, ցավով է նշում, որ նաև զոհեր ունեցան...

Ընդհանրապես հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին մեծ դժվարությունների և զրկանքների գնով կարողացավ ապահովել գյուղի կենսագործունեությունը: Ադրբեջանցիները շրջափակման մեջ էին առել Կապան-Ծավ ճանապարհը՝ Օռած քարի հատվածում: Փաստորեն, Շիկահողի տարածաշրջանի գյուղերը կտրվել էին արտաքին աշխարհից: Հեռախոս չկար, էլեկտրաէներգիա՝ նույնպես: Հաղորդակցության միակ միջոցը ռադիոկապն էր (ռացիա): Այն էլ կապվում էին Արծվանիկ գյուղի հետ, այնտեղից տեղեկությունները հաղորդում էին Կապան:

Վոլոդյան մի հետաքրքիր փաստ էլ է ներկայացնում. 1968 թ. երկրաշարժից հետո Շիշկերտից, Ծավից, Ներքին Հանդից բազմաթիվ ընտանիքներ էին տեղափոխվել Նոր Հաճն: Մի մտահոգիչ նամակ է գրում հայրենակիցներին, ներկայացնում վիճակը, որ դիրքապահ մարտիկներ են անհրաժեշտ, նաև հավելում՝ հայրենիքը ձեռքներիցս գնում է: Անմիջապես արձագանքում են: 10-15 մարդ ՈՒԱՁ մեքենայով ժամանում են, հերթապահում սահմանապահ դիրքերում: Նրանց փոխարինեցին Նոր Հաճնում բնակվող այլ անձինք՝ Շիշկերտ, Ծավ և Ներքին Հանդ գյուղերի նախկին բնակիչներ: Դա մեծապես բարձրացրեց դիրքերում կանգնած համագյուղացիների ոգին:

Շրջափակված և հոսանքից զրկված գյուղում էլի խնդիրներ կային. նա ջանում էր գոնե երեկոյան երկու ժամ գյուղը լուսավորել: Տիտանական ջանքերի շնորհիվ Կապանի փոփոխական հարկերով շենքի անավարտ շինության բակում անտերության մատնված դիզելը «կյանքի ճանապարհով» գյուղ հասցվեց: Պատմում է նաև, որ գյուղում շարժական էլեկտրակայան ունենալու համար անձամբ դիմել է Սպարապետ Վազգեն Սարգսյանին:

Որպես գյուղխորհրդի նախագահ՝ պաշտոնավարեց մինչև 1996 թվականը: Հետո սկսել է զբաղվել այգեգործությամբ և մեղվապահությամբ (վերջին մի քանի տարում, առողջական վիճակով պայմանավորված, միայն վերջինով):

Նրանից, կյանքում շատ բան տեսած անձնավորություն, ցանկացա իմանալ, թե ո՞րն է այս խառնակ վիճակից դուրս գալու ելքը: Ասաց, որ ինքն էլ չի կարողանում կողմնորոշվել: Ապա հավելեց. **«Մի բան կարող եմ ասել՝ միաբան չենք: Մեր դժբախտության ակունքն է դա, մեզ պակասում են համերաշխությունը, համախմբվածությունը, իրար ներելու կարողությունը: Առավոտյան արթնանալիս յուրաքանչյուրն իրեն վարչապետ է կարծում: Փոխանակ նեցուկ լինեն միմյանց, մեկը մյուսի ոտքի տակը քանդում է»:**

Վոլոդյա Մարտիրոսյանն օրինակելի ընտանիք ունի. կինը՝ Ալվարդ Մկրտչյանը, և դուստրերը՝ Մերի, Սաթենիկ, մանկավարժներ են՝ լույսի ու բարու սերմնացաններ: Ավա՜ղ, հազար ափսոս, վաղաժամ կորցրել է միակ որդուն՝ Սասունին:

Հայրենի եզերքին նրա նվիրվածությունն աննկատ չի մնացել: 2009-ին՝ Շուշիի ազատագրման 17-րդ տարեդարձի կապակցությամբ, պարգևատրվել է ՀՀ պաշտպանության նախարարության պատվոգրով, մի ուրիշ անգամ արժանացել «Ծովակալ Իսակով» մեդալի:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ֆրանսահայ Յարութիւն Խաչատուրեանի ուշագրավ նախաձեռնությունը. ուսումնասիրվում է Սյունիքի խաչքարային արվեստը

– Պարոն Խաչատուրեան, ուրախ ենք Ձեզ տեսնել Սյունիքում: Եվ, իհարկե, շնորհակալություն մեզ հետ զրուցելու կամեցողության համար: Բայց մեր զրույցը սկսելու համար ցանկալի է, որ ներկայանայիք մեր ընթերցողին:

– Ես ծնունդով ֆրանսահայ եմ, ծնվել և մեծացել եմ Մարսելում: Հետագայում տեղափոխվել եմ Փարիզ՝ համալսարանում ուսումս շարունակելու: Մայրս ծնունդով Մարսելից է, հայրս՝ Ալէկսանդրետից: Մայրական կողմս Սիվրիհիսարից է՝ Անկարայի մոտակայքի գյուղերից էր, հիմա ահագին մեծացել է, իսկ հայրական կողմս Այնթափցի էր՝ Կիլիկիայից:

Մասնագիտությամբ ճարտարագետ եմ, այստեղ ուրիշ ձև են ընկալում, այսինքն՝ ինժեներ եմ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում (software engineering): Արդեն մոտ 30 տարի է՝ հետաքրքրվում եմ մեր մշակութային ժառանգությամբ, մասնավորապես՝ հոգևոր ժառանգությամբ:

Կատարած աշխատանքիս արդյունքն այս պահին երեք գիրք է: Առաջին գիրքը՝ «Խաչքարի արվեստը - Համատեքստ և կառուցվածքային քննություն - Սպահան և Երուսաղեմ», 2014 թվականին լույս է տեսել ֆրանսերեն, այնուհետև թարգմանվել է հայերեն, 2019-ին «էդիթ պրինտ»-ը հրատարակեց:

Երկրորդ գիրքը վերաբերում է Թուրքիայի հայկական հուշարձաններին: Այն հիմնված է Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարքարանի 1913-1915 թվականի ցուցակի վրա: Մենք այդ ցուցակում ճշտումներ և լրացումներ ենք կատարել, ավելացրել լուսանկարներ և այլ տվյալներ: Միայն ֆրանսերեն հրատարակվեց:

Երրորդ գիրքը համահեղինակներ ունի, հրատարակվել է «Brill» նիդերլանդական հրատարակչության կողմից՝ անգլերեն լեզվով: Հուշարձաններ եվ ինքնություններ Կովկասում. Ղարաբաղը, Նախիջևանը եվ Ադրբեջանը ժամանակակից աշխարհաքաղաքական հակամարտում: Հատորի խմբագիրներ՝ Իգոր Դորֆման-Լազարև և Յարութիւն Խաչատուրեան, Բրիլ, 2023

– Դժվարություններ չե՞ն եղել, երբ Թուրքիայում հայկական սրբավայրերի և խաչքարերի հետքերով եք գնացել:

– Դժվարություններ միշտ եղել են: Երկրորդ գրքի համար մենք անձամբ Թուրքիա չենք գնացել, հիմնականում աշխատել ենք գրասենյակային նյութերի հետ և օգտագործել մեր ընկերների կողմից Թուրքիայում արված լուսանկարները:

Ես անձամբ երկու անգամ եղել եմ Արևմտյան Հայաստանում՝ 1984 և 1985 թվականներին: Այն ժամանակ էլ դժվար էր, իսկ հիմա ավելի է դժվարացել: Երբ այնտեղ գնում ես չափագրական սարքավորումներով, խնդիրներ են առաջանում: Այդ աշխատանքով զբաղվող մարդիկ, օրինակ՝ Սամվել Կարապետյանի նման մասնագետները, իրականում մեծ դժվարությունների են հանդիպել:

– Դուք նաև երկար տարիներ աշխատանք եք կատարել Հայաստանի տարբեր մարզերում: Այդ մասին կուզենայինք իմանալ...

– Մոտ 15 տարի առաջ ես և ընկերս՝ լուսանկարիչ Միշէլ Պասմաճեանը, սկսեցինք խաչքարերի ուսումնասիրությունը՝ նպատակ ունենալով կազմել տվյալների հավաքածու և փաստագրել դրանք, ինչպես արել էինք Երուսաղեմի և Նոր Ջուղայի դեպքում:

Սկզբում նույնակացրեցինք Գեղարքունիքի մարզի խաչքարերը գյուղ առ գյուղ գնալով և լուսանկարելով: Հետագայում

սկսեցինք համագործակցել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնի (ամբիոնի վարիչ՝ Համլետ Պետրոսյան) և «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եվ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնագետների հետ:

Աշխատանքը կազմակերպեցինք մարզ առ մարզ: Գեղարքունիքից հետո անցանք Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի, Վայոց ձորի, իսկ վերջին երկու տարիներին՝ Սյունիքում:

Այս աշխատանքները դեռ ամբողջությամբ չեն հրատարակվել: Հույս ունենք առաջիկայում սկսել առնվազն Արմավիրի և Արագածոտնի մարզերի խաչքարերի վերաբերյալ նյութերի հրատարակությունը:

– Մոտավորապես քանի՞ խաչքար եք ուսումնասիրել Գեղարքունիքում և Վայոց ձորում, քանի որ պատմական Սյունիքի մաս են:

– Գեղարքունիքում մոտավորապես 2000 ից ավելի խաչքար ենք հաշվառել, իսկ Վայոց ձորում՝ շուրջ 700:

– Սյունիքում ե՞րբ սկսեցիք աշխատանքը:

– Սյունիքում աշխատանքը սկսել ենք 2025 թվականին: Աշխարհագրական առումով շարժվել ենք հյուսիսից՝ Սիսիանի տարածքից, և աստիճանաբար տարածվել դեպի Գորիս, Տաթև, Կապան ու Մեղրի:

Այցելել ենք բազմաթիվ բնակավայրեր Սիսիանի, Գորիսի, Կապանի և Մեղրիի տարածաշրջաններում: Աշխատել ենք, օրինակ, Խնածախում, Խնձորեսկում, Շինուհայրում, Հալիձորում, Տաթևում, Վահանավանքում, Լիճքում, Լիճքվազում, Կարճևանում, Ագարակում և այլ վայրերում:

Մինչև հիմա Սյունիքում մոտավորապես 850 խաչքար ենք նույնականացրել:

Գորիս-Սիսիանում, օրինակ, նույնականացրել ենք 548 խաչքար:

– Իսկ Մեղրիի տարածաշրջանում որտե՞ղ եք աշխատել:

– Մեղրիում, Կարճևանում, Լիճքում, Լիճքվազում, Շվանիձորում, Ագարակում և այլ բնակավայրերում:

Իսկ Կապանի շրջանում այցելել ենք Վահանավանք (հատկապես) և Հալիձոր:

– Նախնական ի՞նչ դիտարկումներ ունեք:

– Հայաստանի թանգարաններում կան տարբեր վայրերից տեղափոխված խաչքարեր: Այդպիսիք կան Սարդարապատում, Գորիսի և Կապանի թանգարաններում, ինչպես նաև Մայր Աթոռի տարածքում:

Հասկանալի է, երբ վտանգված տարածքից խաչքարը տեղափոխում են՝ պահպանելու նպատակով: Բայց եթե վտանգ չկա, ինչո՞ւ պետք է խաչքարը տեղափոխել իր պատմական միջավայրից: Օրինակ՝ ինչո՞ւ Գեղարքունիքից կամ Վայոց ձորից հին խաչքարը տեղափոխել Մայր Աթոռ կամ նույնիսկ արտերկրի հայկական եկեղեցի:

Խաչքարի արժեքը միայն նրա զարդաքանդակի մեջ չէ: Նրա արժեքը կարևորվում է, որ գտնվում է իր պատմական միջավայրում:

Վազգեն առաջին կաթողիկոսի օրոք, երբ Հին Ջուղայից մի քանի խաչքար տեղափոխեցին, քանի որ վտանգված էր, դա հասկանալի էր:

– Դուք խաչքարը հիմնականում արվեստի՞, թե՞ պատմության տեսանկյունից եք ուսումնասիրում:

– Նախևառաջ՝ մենք խաչքարն ուսումնասիրում ենք որպես ժառանգություն: Ժառանգությունը նշանակում է նաև պատմություն, ինքնություն և, որոշ առումով, քաղաքականություն:

Մեզ հետաքրքրում է և՛ որակական, և՛ քանակական կողմը: Որակական առումով ուսումնասիրում ենք խաչքարի կառուցվածքը, զարդաքանդակները, արձանագրությունները, վարպետի անունը, թվականը և այլն:

Քանակական առումով մեզ հետաքրքրում է՝ քանի խաչքար կա տվյալ տարածքում, ինչպիսի խաչքարեր են դրանք, ինչ ժամանակաշրջանի են և ինչու է մի տարածքում դրանց թիվն ավելի մեծ կամ փոքր, քան մեկ այլ տարածքում:

Մեզ համար շատ կարևոր է նաև խաչքարի գտնվելու վայրը: Եթե 1000 կամ 1200 տարվա խաչքարը գտնվում է տվյալ հողի վրա, դա այդ տարածքի պատմության և ինքնության վկայությունն է:

– Այսինքն՝ խաչքարը նաև հայ ինքնության վկայությո՞ւն է:

– Այո՛: Բայց ինքնությանը կարելի է մոտենալ տարբեր կողմերից՝ զգացական, փիլիսոփայական, մշակութային ու նաև քաղաքական տեսանկյունից:

Խաչքարը, որպես պատմամշակութային արժեք, ցույց է տալիս, թե տվյալ տարածքում ովքեր են ապրել, ինչպիսի համայնքներ են եղել և ինչ իրադարձություններ են տեղի ունեցել:

– Իսկ ի՞նչ նպատակով էին մեր նախնիները խաչքարեր կանգնեցնում:

– Մի քանի տարբեր նպատակներ են ունեցել: Առաջինը՝ գերեզմանաքարերի կիրառությունն է: Խաչքարը կարող էր կապված լինել մարդու հիշատակի հետ:

Բայց խաչքարը նաև հիշատակի քար է: Այն կարող էր կանգնեցվել մահվան, նվիրատվության, եկեղեցու կամ գյուղի կառուցման, որևէ կարևոր իրադարձության հիշատակին:

Երբեմն խաչքարը կարող էր նաև որոշակի սահմանանշանի նշանակություն ունենալ:

Մենք ուսումնասիրում ենք նաև շատ փոքր խաչքարերը՝ 20-30 սանտիմետր չափերով, ինչպես նաև բեկորները: Բեկորը նույնպես կարող է պարունակել կարևոր տեղեկություն՝ թվական, անուն, արձանագրություն կամ յուրահատուկ զարդաքանդակ:

– Ո՞րն է Սյունիքում Ձեր տեսած ամենահին խաչքարը:

– Մինչև հիմա մեր տեսած ամենահին խաչքարերից մեկը Վահանավանքում է՝ 970 թվականի թվագրությամբ:

Վայոց ձորում ևս ունենք շատ հին օրինակներ: Մասնավորապես՝ կա 876 թվականով թվագրված խաչքար Զանգակատուն գյուղում: Այսինքն՝ Սյունիքում 9-րդ դարից պահպանված խաչքարեր ունենք:

– Խաչքարերի արձանագրությունները պատմագիտության համար նույնպես շատ կարևոր սկզբնաղբյուր են:

– Վիմագրությունները նաև վերլուծում ենք, դրանք կարող են տեղեկություն տալ մարդու անունի, վարպետի, թվականի, նվիրատվության կամ որևէ պատմական իրադարձության մասին:

Այդ առումով շատ կարևոր է Սեդրակ Բարխուդարյանի աշխատանքը: Մենք օգտվում ենք նրա ուսումնասիրություններից:

– Ձեր ուսումնասիրության մեջ ինչպե՞ս եք նկարագրում խաչքարը:

– Նախ ուսումնասիրում ենք պատմությունը, նկարագրում ենք խաչքարի կառուցվածքը: Ուսումնասիրում ենք խաչի ձևը, եզրագոտիները, տարբեր կառուցվածքային տարրերը, այնուհետև՝ զարդաքանդակները և արձանագրությունները:

Մեզ համար կարևոր է նաև զարդաքանդակների հավաքածու ստեղծելը: Օրինակ, կարող ենք առանձնացնել երկրաչափական, գծային, կամարաձև և այլ տեսակի զարդաքանդակներ:

Մենք լուսանկարում և չափագրում ենք նաև պատերի մեջ ագուցված խաչքարերը: Օրինակ, Հալիձորում կան պատերի և սյուների մեջ տեղադրված խաչքարեր: Եթե դրանք ամբողջությամբ պահպանված չեն, ուսումնասիրում ենք նաև պահպանված բեկորները:

– Սյունիքի խաչքարերի մասին ի՞նչ տպավորություն ունեք:

– Դեռ վաղ է վերջնական եզրակացություն անել, քանի որ ամբողջական պատկերը չունենք:

Մինչև հիմա տեսածի հիման վրա կարող եմ ասել, որ Սյունիքում համեմատաբար քիչ խաչքարեր ենք հանդիպել, բայց կան շատ հին օրինակներ՝ հատկապես 10-րդ և 11-րդ դարերից:

Սիսիանի, Գորիսի և Տաթևի ուղղությամբ հանդիպում ենք ավելի զարգացած և հարուստ զարդաքանդակներով խաչքարեր: Մեղրիի և հարակից որոշ շրջաններում խաչքարերը հաճախ ավելի պարզ են՝ երբեմն միայն մեկ խաչով և արձանագրությամբ:

Շարունակությունը՝ էջ 12

ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆԸ՝ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ



Օրերս Գերմանիայի Mittel-deutscher հրատարակչությունը Սաքսոնիա – Անհալթի «Ֆրիդրիխ – Բյոդեքեր – Կրայս» միության և Հայաստանի ԳՄ համագործակցությամբ տպագրել է հայերեն- գերմաներեն ժողովածու՝ «Կարոտի կամուրջներ» խորագրով, որում ներկայացված են ժամանակակից 20 հայ և նույնքան գերմանացի հեղինակների գործեր:

Գիրքը խմբագրել և հրատարակության է պատրաստել «oda» հեղինակավոր ամսագրի խմբագիր, Եվրոպայում լայնորեն ճանաչված բանաստեղծ Անդրե Շինքելը, առաջաբանը գրել է ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը:

Այս գրքով Գագիկ Դավթյանը գերմանացի ընթերցողին ներկայացվում է չորրորդ անգամ: Ավելի վաղ նրա ստեղծագործությունները տեղ են գտել «oda», ամսագրում (Սաքսոնիա-Անհալթ -3/2012), «Արդի հայ քնարերգություն» անթոլոգիայում, (Երևան - 2012) «Հայաստան. սրտի պոեզիա ... և ուրիշ ոչինչ», անթոլոգիայում (Մայնի Ֆրանկֆուրտ 2017):

Շնորհավորում ենք մեր հայրենակցին:

Ներկայացվող գործերն ընտրված են նշված հրապարակումներից:

ԵՐԵՔ ԿՐԱԿՈՑ՝ ՄԵԿ ՓԱՄՓՈՒՇՏՈՎ

Դժբախտ սիրուց
տառաճանաչ խելոքները, սովորաբար,
ուրիշ ոչինչ որ չլինի,
սիրո մասին լալկան երգեր գրելով են մխիթարվում,

Հիմարները սովորական
կամ կամուրջից նետվում են ցած,
կամ պապայի մեքենայով են վթարվում
նստած ղեկին,
կամ ուղղակի... սրահարվում,

Իսկ սրանցից հիմարները
պարզապես... չեն սիրահարվում...
Սրանք սակայն՝
(վերջիններս),
հիմարներն են այն դասական,
որ հաճույքը ծաղկեփնջի
(խոսքս կոպիտ թող չհնչի),
վայելում են ոչ թե քթով՝ հոտոտելիս,
այլ... ուտելիս,
բերանի մեջ, ատամի տակ –

և սեփական ատամների
ճերմակությունն ընդգծելու նպատակով
իրենց դեմքը մրով պատում
և գնում են ու ապրում են... անապատում...

Հեր օրհնածներ, ո՞վ չգիտե,
Անապատում
կարելի է ապրել միայն աղբյուրի մոտ,
սակայն մի՞թե
աղբյուրի մոտ կարելի է ապրել միայն
անապատում...

ԱՎԱՐՏԻ ԱՂԵՐՍ

Կյանքս արել տակնուվրա,
և խոսում ես երազներից վեհ ու վսեմ...

Ճչում ես դու,
և ուզում ես, որ չլսեմ...

Կանչում ես ինձ
և հորինում խոչընդոտներ հազար ձևի...

Քշում ես ինձ,
և կառչում ես դու իմ թևից...

Գնում եմ ես,
և գալիս ես իմ ետևից...

Չես խղճում ինձ...

Գոնե ինքդ քեզ խղճալու
խի՞ղճ էլ չունես ամենևին...

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քանդելը հեշտ է,
շինելն է դժվար...

Բացառություն են դղյակներն օդե՝
շինելը հեշտ է,
քանդելն է դժվար...

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ է առաջ մղում մեր կյանքն, իրավ,–
արդյոք լավատե՞սը անուղղելի,
թե հոռետեսն անհույս...

Բայց կարիք կա՞ նրանց հակադրելու,
գուցե նրանք, իրոք, երկվորյակներ են հենց,
որ մի մարմին ունեն, երկու գլուխ –
և առաջ են մղում մեր կյանքն ահա
երկու գլուխ, այսպես՝ գլուխ – գլխի..
.
Ուրեմն, ինչո՞ւ իզուր զոռ տալ գլխին,
ինչո՞ւ իզուր տեղը գլուխ ջարդել,
երբ ամեն ինչ կնքված – հաստատված է արդեն –

մեր լավատես կեսըկարճատես է անշուշտ,
և հոռետես կեսն է հեռատեսը –

հարկավոր չէ բնավ օրինակներ փնտրել –
ահավասիկ, խնդրեմ՝
եթե օդանավը լավատեսի գյուտն է,
հոռետեսի գյուտն էլ պարաշյուտն է...

Եկ, բժշկիր մեզ, Տեր,
փրկիր մեզ մեզանից, քանի շուտ է,
թե չէ օդանավը կխորտակվի հանկարծ,
և չի բացվի հանկարծ պարաշյուտը...

ԱՆԳԼՈՒԽ ՁԻԱՎՈՐԸ

Աստված մեկին գանգ է տալիս,
մեկին՝ գլուխ,
ուրիշ մեկին՝ ոչ այս, ոչ այն,
և ամենքն էլ աստվածատուր իրենց ընծան
ընդունում են հեզ ու հլու...

Եվ ուրեմն, ոչինչ չկա զարմանալու,
երբ ձիավորն է անգլուխ,

կամքն է Տիրոջ...

Տեր, ողորմեա զավակներիդ,
ահավոր է դառնում իրոք,
երբ եռում է մարտադաշտը,
ու երբ մահվան փոթորիկ է սար ու ձորում,
և անգլուխ ձիավորն է գլխավորում
հեծյալ վաշտը...

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Անդարձ կորուսյալ խիղճս գտնողին՝
հույժ անհրաժեշտ հետգրությամբ

Առեղծվածային հանգամանքներում,
չեմ հիշում՝ որտեղ,
կորել է խիղճս՝
անձնագրիս հետ և այցեքարտիս...

Ետ տալու դարդից
թող գտնողն իզուր չհալումաշվի,
թող չելնի կաշվից –
իր գտածոն է –
թող հանգիստ խղճով իրենը հաշվի
և իզուր տեղը ինձ չընորոնի,
ոստիկանության միջոցով անգամ
նա ինձ չի գտնի...

Ոստիկանության գործառույթների
ցանկի մեջ երկար
գտածոները ըստ պատկանելույն վերադարձնելը
չի ամրագրված թեկուզ մի տողով,
ուրիշ բան, եթե դա լիներ գողոն,
լիներ, ասենք, թե,
տախտակ ու ավազ, կամ ցեմենտ ու խիճ,
սակայն կորած խի՞ղճ –
ձեր տունը շինվի –

Ոստիկա՜նը ուր – կորած խիղճը ուր,
ան-խիղճ մա՜ղը ուր...

Այնպես որ, այո, թող գտնողն իզուր
չ ա ն հ ա ն գ ս տ ա ն ա,
ոչ մի պարգև էլ նա չի ստանա,
ումի՞ց ստանա, եթե ես...չկամ,
ավելի ճիշտ՝ կամ, սակայն ԵՍ չեմ ես,
ես ուրիշ մարդ եմ,

փոխել եմ անուն-ազգանունս արդեն,
փոխել եմ հասցես,
աշխատավայրս և հեռախոսիս համարն եմ փոխել,
իսկ նախկին տանս ինձ հիշեցնող
հետք իսկ չեմ թողել,
և այնտեղ ոչ ոք չի ապրում արդեն,
կամ ավելի ճիշտ՝ ապրում է... ՈՉ ՈՔ,
խնդրում եմ գլխով դուռը չջարդել,
ափսոս է դուռը,
դուռն ինչ մեղք ունի,
թե յոթ կողպեք են կախել իր վրա,
թեպետ գլուխն էլ ափսոս է, իրավ,
պետք կգա մի օր...

Դե իսկ իմ խիղճը
իմ հոգին վաղուց կրծել – պրծել է բարեխղճորեն
և կուշտ է անշուշտ,
առանց հիմնավոր ու լուրջ պատճառի
գտնողին երբեք ցավ չի պատճառի,
թող իրեն մնա,
վճար չեմ ուզում,
տալիս եմ ձրի՝
այցեքարտիս հետ և անձնագրիս...

Հ.Գ.
Անդարձ կորուսյալ խիղճս գտնողը,
եթե իսկապես ինքն էլ խիղճ ունի
և երկու խղճով ապրել չի կարող,
իզուր է տանջվում,
կարող է հանել ազատ վաճառքի –
խղճի վաճառքից հարկեր չեն գանձվում...

Հրաժեշտ հարազատ կրթօջախին

Օգոստոսի 26-ի առավոտյան աշխուժություն էր Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի բակում: Ուսանողների մի մասը ավարտական համազգեստով էր, շրջանավարտի ավանդական գլխարկով: Անպակաս էին շնորհավորանքներն ու բարեմաղթանքները՝ բուհն ավարտելու առիթով: Մասնաճյուղի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունն էր և հրաժեշտը հարազատ կրթօջախին:

2025-26 ուստարում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղին հրաժեշտ էր տալիս 76 շրջանավարտ՝ 36-ը՝ առկա, 40-ը՝ հեռակա ուսուցմամբ (նրանցից մեկը՝ Սերվինե Խաչատրյանը, գերազանցության դիպլոմով):

Միջոցառմանը մասնակցում էին «ՃՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ, Կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը, Կապանի համայնքապետի առաջին տեղակալ Գոռ Թադևոսյանը, այլ պաշտոնատար անձինք, կրթօջախի նախկին շրջանավարտներ: Այն էլ էր խորհրդանշական, որ արարողությունն անցկացվեց մասնաճյուղի բակում, և մինչև դիպլոմը ստանալը շրջանավարտն անցնում էր կարմիր գորգի վրայով: Ողջերթի խոսքով հանդես եկավ մասնաճյուղի տնօրենի պարտականությունները կատարող Նունե Իսակյանը, ով մասնավորպես նշեց, որ Կապանի պոլիտեխնիկն իր գոյության ընթացքում տվել է մոտ 2300 շրջանավարտ, որոնց մեծ մասն աշխատում է լեռնահանքային արդյունաբերությունում: Բանախոսը համոզմունք հայտնեց, որ այս սերնդի շրջանավարտները մասնաճյուղում ստացած գիտելիքներով կնպաստեն մեր երկրի տնտեսության զարգացմանը:

Բարեմաղթանքի խոսքեր հնչեցրին մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարի ուսումնամեթոդական աշխատանքների և միջազգային համագործակցության գծով տեղակալ Տիմեա Աղամյանը, մասնաճյուղի երկարամյա նախկին տնօրեն, տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սեյրան Բալասանյանը, մասնաճյուղի հիմնադիր դասախոսներից՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ամբիոնի դոցենտ Անահիտ Այվազյանը:

Դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողության մասնակիցներին երաժշտական ողջույններ հղեցին «Նարե» վոկալ ստուդիայի երաժիշտները:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

2025-26 ուստարում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղին հրաժեշտ էր տալիս 76 շրջանավարտ՝ 36-ը՝ առկա, 40-ը՝ հեռակա ուսուցմամբ (նրանցից մեկը՝ Սերվինե Խաչատրյանը, գերազանցության դիպլոմով):

О выборах депутатов в Государственную Думу на территории Армении

Вниманию граждан России!

20 сентября 2026 года состоятся выборы депутатов Государственной Думы Федерального Собрания Российской Федерации девятого созыва.

Для проведения голосования на территории Республики Армения образованы следующие избирательные участки:

- №8026 в Посольстве России в Армении (г.Ереван, ул.Сурб Григор Лусаворич, д. 13/3);
- №8031 в Генеральном консульстве России в Гюмри (г.Гюмри, ул.Гарегина Нжде, д.1).

Голосование будет проводиться в течение одного дня, 20 сентября 2026 года, с 8.00 до 20.00 по местному времени.

Участие в голосовании могут принять граждане России, постоянно проживающие или временно пребывающие в Армении, и на момент голосования достигшие возраста 18 лет.

Предварительная регистрация не требуется! При себе необходимо иметь документ, удостоверяющий личность гражданина Российской Федерации (внутренний или заграничный паспорт).

armenia.mid.ru/ru/vybory_v_gosudarstvennuyu_dumu_2026/

Ֆրանսահայ Յարութիւն Խաչատուրեանի ուշագրավ նախաձեռնությունը. ուսումնասիրվում է Սյունիքի խաչքարային արվեստը

Սկիզբը՝ էջ 10

Բայց դեռ պետք է ամբողջ Սյունիքն ուսումնասիրենք: Չեմ ուզում եզրակացություն անել 50 կամ 100 խաչքարի հիման վրա: Մեր աշխատանքում քանակական ամբողջականությունը շատ կարևոր է:

– Իսկ Նոր Ջուղայի և Սյունիքի խաչքարերի միջև զուգահեռներ տեսնո՞ւմ եք:

– Այո, որոշ զուգահեռներ կան: Նոր Ջուղայի խաչքարերը հիմնականում փոքր են և ագուցված են եկեղեցիների պատերում կամ ներսի հատվածներում: Դրանք ստեղծվել են հիմնականում 17-րդ դարում և ոճական առումով որոշ նմանություններ ունեն Հին Ջուղայի խաչքարերի հետ:

Սյունիքում ևս հանդիպում ենք որոշ զարդաքանդակների և կամարաձև լուծումների, որոնք որոշակիորեն հիշեցնում են պարսկական կամ տեղական ազդեցություններ:

Բայց վերջնական համեմատություն անելու համար դեռ պետք է ամբողջական նյութ ունենանք:

– Ուրիշ ի՞նչ հատկանիշներ են Ձեզ հետաքրքրում խաչքարերն ուսումնասիրելիս:

– Մենք նաև հետաքրքրված ենք խաչքարի երկրաչափական համամասնություններով: Օրինակ, ինչ հարաբերություն կա խաչի ուղղահայաց և հորիզոնական թևերի միջև, ինչպես են դրանք կառուցվել, ինչպիսի համաչափություններ են օգտագործվել:

Այս թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները շատ քիչ են: Սովորաբար ուշադրությունը կենտրոնացվում է արձանագրությունների վրա, մինչդեռ խաչքարի մակերեսի մեծ մասը զբաղեցնում են զարդաքանդակները:

– Խաչքարերի տեղադրության հետ կապված որևէ հատուկ կանոն կա՞:

– Ավանդական խաչքարի տեղադրումը կողմնորոշված է: Դասական մոտեցմամբ խաչքարի քանդակված երեսը պետք է ուղղված լինի դեպի արևմուտք: Սա կապված է նաև քրիստոնեական խորհրդաբանության հետ. արևելքը լույսի ուղղությունն է: Հայկական եկեղեցիների դեպքում ևս խորանն արևելյան կողմում է և աղոթում ենք նայելով արևելքը:

Հետևաբար խաչքարի տեղադրումը, պատահական չէ և ունի խորհրդանշական նշանակություն: Ցավոք, այսօր խաչքարերը երբեմն տեղադրվում են առանց այդ սկզբունքը հաշվի առնելու: Խաչքարը դառնում է սովորական առարկա:

Հանգուցյալին պետք է այնպես հուղարկավորել, որ նայի խաչքարին:

– Ի՞նչ ծրագրեր ունեք առաջիկայում Սյունիքում:

– Մեր աշխատանքը շարունակվելու է: Առաջիկայում նախատեսում ենք ուսումնասիրել Գորիսի շրջանի մի շարք բնակավայրեր՝ Խնածախ, Արավուս, Խոզնավար, Հարժիս, Քարահունջ, Խոտ, Բարձրավան և այլ վայրեր:

Շարունակելու ենք նաև Կապանի ու հարակից տարածքների ուսումնասիրությունը:

Յուրաքանչյուր խաչքար լուսանկարում ենք, չափագրում, վերցնում դրա աշխարհագրական կոորդինատները և գրանցում գտնվելու վայրը: Նշում ենք նաև՝ որտեղ է այն գտնվում՝ դաշտում, եկեղեցու պատի մեջ, ճակատին, խորշում և այլն:

Յուրաքանչյուր խաչքար ստանում է իր դասիչը և փաստաթղթավորվում տվյալների շտեմարանում:

– Այսինքն՝ ստեղծում եք նաև խաչքարերի տվյալների շտեմարան...

– Այո՛: Մենք ստեղծել ենք խաչքարերի գույքագրման տվյալների շտեմարան: Յուրաքանչյուր խաչքար ունի իր «անձնագիրը»՝ լուսանկարներով, չափերով, տեղադրության տվյալներով, արձանագրությամբ և այլ տեղեկություններով:

Այդ համակարգը հետագայում թույլ կտա ոչ միայն պահպանել տեղեկատվությունը, այլև ուսումնասիրել խաչքարերը քանակական և որակական տեսանկյունից:

– Կա՞ն կազմակերպություններ, որոնց հետ համագործակցում եք:

– Մեր աշխատանքի կարևոր մասն է նաև ուսանողների ներգրավումը: Երևանի պետական համալսարանի հետ ունենք համագործակցության համաձայնագիր: Ամեն տարի մեզ հետ աշխատում են ուսանողներ. նրանք մասնակցում են չափագրմանը, գրանցմանը, թվականների և արձանագրությունների ուսումնասիրությանը:

– Որքա՞ն ժամանակ կպահանջվի Սյունիքի խաչքարերի ուսումնասիրությունն ավարտելու համար:

– «Ավարտել» բառը հարաբերական է: Կարծում եմ՝ ևս մոտ երկու տարի, կարող ենք ունենալ բավական վստահելի ու ամբողջական պատկեր Սյունիքի խաչքարերի վերաբերյալ:

Դրանից հետո արդեն հնարավոր կլինի պատրաստել և հրատարակել Սյունիքի խաչքարերին նվիրված գիրքը:

Մեր նպատակն է ոչ թե մի քանի տասնյակ կամ հարյուր խաչքարի հիման վրա եզրակացություն անել, այլ հնարավորինս ամբողջական նյութ հավաքել:

– Իսկ ո՞վ է հովանավորում Ձեր այդ հրաշալի նախաձեռնությունը:

– Ես և Միշել Պասմաճյանը:

– Ձեզ հաջողություն եմ ցանկանում: Հույս ունեմ, որ մի օր կունենանք Սյունիքի խաչքարերին նվիրված ամբողջական կամ հնարավորինս ամբողջական գիրքը:

– Հույս ունեմ, որ այդ աշխատանքը կհասցնեմ ավարտին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ԻԶԱ ԱՍՇԱՏՐՅԱՆԻ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 15.09.2026թ.: